ՏԱՎՈՒՇ

Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզի
ձեռքբերումները 2007-2011 թվականներին

Տպագրված է «ՍԱՄԱՐԿ» ՍՊԸ տպագրատանը
Տպաքանակը՝ 3000 օրինակ

Տավուշ

Քաղաքակրթության հնագույն օջախներից մեկում, թավշյա անտառների գրկում ու կարկաչուն գետերի հովիտներում անհիշելի ժամանակներից ապրում է մարդու մի տեսակ, որ կոփված պողպատի պես կարծր է արտաքուստ ու փափուկ՝ սրտում, մարդու մի տեսակ, որի օջախի հյուրընկալ ջերմությունը վայելել են ասորա-բաբելական առևտրական քարավաններն ու, որի մարտական կանչից սառել է արյունը թշնամու երակներում:

Այստեղ՝ Տավուշի հնագույն հողում կողք-կողքի հաշտ ու խաղաղ երկինք են խոյանում հեթանոսական մեհյանն ու գմբեթավոր եկեղեցին: Այստեղ մարդը հաշտ է իր անցյալի ու ներկայի հետ: Հաշտ է ու հպարտ: Այստեղ է հայն առաջին անգամ ամբողջականացրել իր օրենքներն ու սերունդներին ավանդել առակների իմաստությունը: Այստեղ են ստեղծվել ու պահպանվել մարդու մտքի ու ոգու զորության բազմաթիվ կոթողներ, քաղաքակրթության և համայն մարդկության մշակութային ժառանգության գլուխգործոցներ՝• ձեռագրեր, ասեղնագործ խաչքարեր ու հոյակերտ եկեղեցիներ: Այս հողում է ասպատակված վանքից հալածված վարդապետն իր աշակերտներին կրթել քարայր-դպրոցում: Այս հողում է արշավանքից տուն դարձող Սպարապետը հայոց տնկել սրբազան կաղնին, որ պիտի կանգուն մնար տասնհինգ դար:

Այստեղ է ապրում հայը, որ խոտ հնձելու և ոչխար լողացնելու արանքում տապակվում է աշխարհի ցավերով, զմայլվում ու զարմանում

աշխարհով և քաղաքակրթության հնագույն լեզուներից մեկով մի տողում ձևակերպում մարդկության հավերժական հարցը. «Աշխարհը... հա՛յ կրակ, հա՛յ փետ, հա՛յ Աստված, հա՛յ կնիկ... ո՞վ է ստեղծել...»:

Դիմացկուն է ու համառ հայի այս տեսակը: Ահավասիկ, Սևքար շենը հինգ հարյուր տարվա մեջ կրկնակի ասպատակվել ու հիմնովին ավերվել է տասներեքերորդ և տասնութերորդ դարերում: Եվ սակայն, քոչվորի հողմը ցրիվ է եկել տավուշցու կամքի երկաթակոփ դարպասին զարնվելով: Շենն ավերած թաթար-մոնղոլներից ու խաներից հայոց հողում դառը հուշ է մնացել միայն, իսկ հայի շենը կրկին կանգուն է ու անխախտ: Կես հազարամյակ առաջ թշնամու առաջ վիզ չծռած սևքարեցու ժառանգներն այստեղ են ապրում, այստեղ են կազմում ընտանիք ու զավակներ ունենում: Այսպես է եղել՝ դարեր ու հազարամյակներ առաջ: Այսպես է նաև այսօր...

Տավուշի բնակչության կեսից ավելին բնակվում է գյուղերում: Մարդաբույր են ու խաղաղ Տավուշի շեների անունները՝ Վազաշեն ու Ոսկեպար, Այգեհովիտ ու Այգեձոր, Այգեպար... անտեղյակ օտարականի մտքով անգամ չի կարող անցնել, որ դեռ երկու տասնամյակ անգամ չի անցել այն ժամանակներից, երբ հովվերգական անվանումներով այս շեներում ոռնում էին արկերը, պայթում ականներն ու սուրում գնդակները: Դեռ չեն սպիացել ազերի հրոսակի խոցած վերքերը Տավուշի շեներում: Հանրապետության՝ պատերազմի աղետից ամենատուժած բնակավայրում՝ Ներքին Կարմիր Աղբյուրում դեռ թարմ են հրետակոծության ու ավերումի հիշողությունները: Իրենց օրինական տիրոջն ու մշակին են հիշում դեռևս հակառակորդի հսկողության տակ գտնվող շուրջ հազար հեկտար որակյալ խաղողի և պտղատու այգիները: Հիշում են ու կարոտում...

Սակայն հիշում է նաև թշնամին: Հիշում է իր բոլոր ջարդված ոսկրերով ու նվվացող վերքերով: Հիշում է, թե ինչպես հայը խորտակեց Տավուշի վրա ծառացած ոսոխի ողնաշարն ու հետ շպրտեց իր սահմանից: Հիշում է, և վախով ու ակնածանքով է նայում արևի մայրամուտին, քանի որ այնտեղ՝ արևմուտքում, անսասան ու անխախտ կանգնած է Տերը հայոց հողի ու

պահապանն իր զավակների: Կանգնած է հպարտ ու համառ: Ու հենց սահմանին, ի հեճուկս հակառակորդի, աղոթում է իր Աստծուն ու կրթում իր զավակին, ամանոր դիմավորում ու մշակում իր արտերը...

Տավուշցին Հայոց երկրի սահմանապահն է եղել բազում դարեր շարունակ: Պահել ու պահպանել է հայրենյաց հողը կիրճերում ու լեռների վրա: Իր Կոռաբերդով, Տավուշ բերդով ու Գավարգին ժայռ-ամրոցով պատսպարել է հայ շինականի աշխատանքն ու հայ մանուկի խաղաղ քունը: Տավուշում չկա շեն, որ իր զավակի կյանքով ու արյամբ վաստակած չլինի հայոց պետականության գոյության իրավունքը: Այսօր էլ տավուշցին շինական-զինվոր է: Ու սահմանապահ:

Պատերազմի արհավիրքներից ամենատուժած մարզը, ինչպես դարեր առաջ, կրկին ապաստան դարձավ անտուն ու անօթևան մնացած բռնագաղթածներին, շահումյանցուն ու շամխորցուն: Ապաստան դարձավ նաև մարդկության ամենաահեղ պատերազմում հաղթանակած երկու հերոս զորավար աշխարհին պարգևած մարշալածին Չարդախլու գյուղի հարյուրավոր ընտանիքների համար: Դարձավ ապաստան ու նոր օջախ, ուր նոր անխոնջ շինականներ ու հերոս զորավարներ պիտի ծնվեն հայոց երկրի այս անառիկ բերդում, որ անխախտ պիտի պահեն հայոց պետականությունն ու ապրեն լիարյուն ստեղծագործ կյանքով: Տավուշի հող ու ջրի զորությամբ պիտի ծնվեն նոր օլիմպիական չեմպիոններ ու արվեստագետներ, նոր ժամանակների հերոսներ, ում արմատները պիտի միահյուսվեն անվանի երկրակիցների՝ Վլադիմիր Ենգիբարյանի, Լևոն Արոնյանի, Արմեն Գուլակյանի ու էլի շատ-շատերի արմատներին: Պիտի ծնվեն ու բազմանան քանի դեռ աշխարհի հրաշագեղ ու անկրկնելի այս անկյունը Հայրենիք են կոչում:

Ու Տավուշի շեները, կիրճերն ու անտառները պիտի լեցուն մնան հայոց երգ ու խաղով, վաղվա օրվա հանդեպ վստահությամբ ու հաղթանակների հանդեպ հավատով:

Մարդը

Բնակչության թվաքանակը Տավուշի մարզում կրճատվել է ընդհուպ մինչև 2009 թվականը: 2010 թվականից սկսած մարզի բնակչությունը թեպետ դանդաղ, սակայն հետևողական ու աննահանջ աճում է:

Մինչև մեկ տարեկան երեխաների մահվան դեպքերը մարզում զգալիորեն

Բնակչության թվաքանակը Տավուշի մարզում (հազար մարդ)



նվազել են, ինչը վկայում է մարզում մանկաբարձա-գինեկոլոգիական ծառայությունների մատչելիության ու որակի բարձրացման մասին: Այսպես, 2011

Մինչև 1 տարեկան մահացածների թվաքանակը Տավուշի մարզում (մարդ)



թվականին 1998 թվականի համեմատ, մինչև 1 տարեկան մահացածների թվաքանակը **նվազել է շուրջ երկուսուկես անգամ,** իսկ 2004 թվականի համեմատ՝ **կրկնակի**:

Նախորդ տասնամյակի ընթացքում մարզում ավելի քան մեկ երրորդով ավելացել է ամուսնությունների թիվը:

Ամուսնությունների թիվը Տավուշի մարզում



Նախորդ տասնամյակի ընթացքում մարզում աստիճանաբար **նվազել է նաև միգրացիայի բացասական մնացորդը՝** Տավուշի մարզ եկողների և մարզից

Միգրացիայի մնացորդը Տավուշի մարզում (մարդ)

մեկնողների թվաքանակի տարբերությունը կրճատվել է, ընդ որում այս միտումը թե՛ մեկնողների թվի նվազման, թե՛ վերադարձողների թվի մեծացման արդյունք է:

Տնտեսության սյուները

Տավուշի մարզում գյուղատնտեսության համախառն արտադրանքը 2011 թվականին 2000 թվականի համեմատ եռապատկվել է:

Վերջին տասնամյակում հետևողականորեն զարգացող գյուղատնտեսությանը զգալի հարված հասցրեց 2008 թվականի համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամը: 2009 թվականին գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալները 2007 թվականի համեմատ մարզում կրճատվեցին գրեթե մեկ երրորդով: Հետագա տարիներին, սակայն, ՀՀ կառավարության ջանքերի շնորհիվ մարզի գյուղատնտեսությունը վերականգնվեց, և արդեն 2011 թվականին **գյուղատնտեսության համախառն արտադրանքը մարզում հասավ աննախադեպ ծավալների**:

Նախորդ տասնամյակում Տավուշի մարզում զգալիորեն զարգացել է հատկապես բուսաբուծությունը: 2010 թվականին աճել են բուսաբուծության հա-

Գյուղատնտեսության համախառն արտադրանքը Տավուշի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



Գյուղատնտեսության համախառն արտադրանքի ծավալների փոփոխությունը Տավուշի մարզում (ընթացիկ գներով, մլրդ. դրամ)



2010 թվականին Տավուշում բուսաբուծության ծավալները 2000 թվականի համեմատ ավելացել են ավելի քան 3.75 անգամ:

մախառն արտադրանքի ծավալները: Եթե 1998 թվականին Տավուշի մարզում անասնաբուծության արտադրանքի ծավալները շուրջ երկու անգամ գերազանցում էին բուսաբուծության արտադրանքի ծավալները, ապա 2010 թվականին դրանք գրեթե հավասարվել են:

Բուսաբուծության և անասնաբուծության համախառն արտադրանքի ծավալները Տավուշի մարզում (ընթացիկ գներով, մլրդ դրամ)



Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի համախառն բերքը 2011 թվականին **գերազանցել է** նախորդ բոլոր տարիների արդյունքները գերազանցապես բերքատվության աննախադեպ աճի շնորհիվ՝ շուրջ 3.2 տոննա մեկ հեկտարից, ինչն ավելի բարձր է, քան հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի բերքատվության միջին ցուցանիշը ողջ հանրապետությունում: Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի բերքատվությամբ Տավուշի մարզը 2011 թվականին զիջել է միայն Արարատյան դաշտավայրի գյուղատնտեսությանը:

Հացահատիկային և հատիկաընդեղենային մշակաբույսերի համախառն բերքը Տավուշի մարզում (տոննա)



Նախորդ տասնամյակում Տավուշի մարզի գյուղացիական տնտեսությունները հետևողականորեն հրաժարվել են մարզի բնակլիմայական պայմաններում կարտոֆիլի անարդյունավետ մշակումից՝ անցնելով առավել արդյունավետ մշակաբույսերի: Այսպես, 1998 թվականի համեմատ, 2011 թվականին կարտոֆիլի ցանքատարածությունները Տավուշի մարզում կրճատվել են շուրջ 70 տո-

2011 թվականին Տավուշում բանջարանոցային բույսերի համախառն բերքը 2000 թվականի համեմատ ավելի քան եռապատկվել է, մինչդեռ ցանքատարածությունները կրճատվել են շուրջ տասը տոկոսով:

Բանջարանոցային մշակաբույսերի ցանքատարածությունները և համախառն բերքը 2000 և 2011թթ.



կոսով: Այդուհանդերձ, Տավուշի մարզում դեռևս զգալի հողատարածքներ հատկացված են կարտոֆիլի ցանքատարածություններին, որոնք Տավուշում զիջում են միայն Լոռու, Շիրակի և Գեղարքունիքի մարզերին և ավելին են, քան Արարատի, Կոտայքի և Վայոց Ձորի մարզերում միասին վերցրած:

Նախորդ տասնամյակում Տավուշի մարզում **ավելի քան 13.5 անգամ ավելացել է բոստանային մշակաբույսերի համախառն բերքը՝** գերազանցապես բերքատվության մեծացման շնորհիվ:

Նախորդ մեկուկես տասնամյակում Տավուշի մարզում **հետևողականորեն**

Պտղի և հատապտղի համախառն բերքը 2011 թվականին քառապատկվել է 2000 թվականի համեմատ:

ընդլայնվել են պտղի և հատապտղի ցանքատարածությունները:

Տավուշում շոշափելիորեն ավելացել է խաղողի համախառն բերքը. 2011 թվականին տավուշցիներն արտադրել են եռապատիկ ավելի խաղող, քան 1998 թվականին: Գյուղացիական տնտեսությունների արտադրած խաղողի բերքի աճը գերազանցապես բերքատվության ավելացման, մասնավորապես՝ ներդրված նոր գիտելիքների և տեխնոլոգիաների արդյունք է: Խաղողագործության հատվածում մարզի գյուղատնտեսության ձեռքբերումները, մարզի վերամշակող արտադրության զարգացմանը և բերքի մթերման ծավալների հետևողա-

Խաղողի համախառն բերքը 2011 թվականին 2002 թվականի համեմատ տասնապատկվել է:

կան աճին զուգահեռ, նոր հեռանկարներ են ստեղծում Տավուշի մարզում խաղողի տնկարկների տարածքների ընդլայնման համար:

Եթե 2001-2005 թվականներին Տավուշի մարզում չոր ծխախոտի արտադ-

Խաղողի համախառն բերքը Տավուշի մարզում (հազ. տոննա)

ության ծավալն աստիճանաբար ընկել է՝ հինգ տարում կրճատվելով քառապատիկ, ապա 2007 թվականից արտադրության ծավալները հետևողականորեն աճել են:

2012 թվականին Տավուշի մարզի համայնքներում ցանքատարածությունները **կգերազանցեն 15 հազար հեկտարը՝** 2011 թվականի համեմատ ավելանալով շուրջ վեց տոկոսով:

2007 թվականին Տավուշի մարզում աֆրիկյան ժանտախտը մեծ թվով խոզերի անկման պատճառ դարձավ: Խոզերի գլխաքանակը Տավուշի մարզում կրճատվեց ավելի քան քսան հազարով: 2008 թվականին խոզերի գլխաքանա-

2011 թվականին 2006 թվականի համեմատ չոր ծխախոտի արտադրության ծավալը ավելի քան տասնապատկվել է, գերազանցելով 2001 թվականին արտադրված ծխախոտի ծավալները:

Ծխախոտի ցանքատարածությունները Տավուշի մարզում

Խաղողի մթերման աշխատանքները

Խաղողի համախառն բերքը Տավուշի մարզում (հազ. տոննա)



կը նվազեց ավելի քան 3.6 անգամ: Հանրապետությունում ոչ մի ուրիշ մարզ այսչափ վնաս չի կրել համաճարակից: Համաճարակը շատ վնասներ պատճառեց հատկապես Նոյեմբերյանի տարածաշրջանի անասնապահներին: Այդուհանդերձ, համաճարակին հաջորդած տարիներին մարզի անասնապահներն սկսեցին քայլ առ քայլ վերականգնել կորուստները, և 2011 թվականին խոզերի գլխաքանակը 2008 թվականի համեմատ մարզում **ավելացավ գրեթե երեք քառորդով**:

Խոզերի գլխաքանակի փոփոխությունը 2008-2011թթ. (հազար գլուխ)



2007-2011 թվականներին Տավուշի մարզում արտադրվել է նույնքան հավկիթ, որքան 1998-2006 թվականներին՝ ինը տարում միասին վերցրած: 2011 թվա-

Տավուշի մարզում հավկիթի արտադրությունը 2010 թվականին 1998 թվականի համեմատ ավելացել է շուրջ երկուսուկես անգամ:

կանին Տավուշում արտադրվել է **ավելի շատ հավկիթ** քան Լոռիում, Շիրակում, Սյունիքում, Վայոց Ձորում և մայրաքաղաք Երևանում:

Տավուշի մարզի ոռոգման նախկինում հզոր Ջողազի, Սևքարի, Այգեհովիտ-Վազաշենի սահմանամերձ համակարգերը, որոնք նախքան ադրբեջանական ագրեսիան ոռոգում էին շուրջ ութ հազար հեկտար գյուղատնտեսական հողատարածքներ, ներկայում ավերված են: Այդուհանդերձ, ոռոգման համակարգերը Տավուշում աստիճանաբար վերակենդանանում են, և վերջին տասնամյակներում անջրդի հողերը նոր կյանք են առնում:

Տավուշի մարզում գյուղատնտեսության զարգացմանը մեծապես նպաստել են 2007-2011 թվականներին ոռոգման համակարգերի հիմնանորոգման ու վերակառուցման մեծածավալ կապիտալ ծրագրերը: Ոռոգման համակարգերի վերականգնմանն ուղղված ավելի քան չորս միլիարդ դրամի արժեքով ներդրումները 2007-2011

Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը և Տավուշի մարզպետ Արմեն Ղուլարյանը «Նոյեմբերյան 1» պոմպակայանի բացման արարողությանը

թվականներին ծավալով զիջում են թերևս միայն ճանապարհաշինության ու կրթության կապիտալ ծրագրերին, իսկ նշված ժամանակահատվածում այս ոլորտում Տավուշի մարզում կատարվել են գրեթե նույնքան ներդրումներ, որքան Արարատի, Լոռու, Շիրակի և Սյունիքի մարզերում միասին վերցրած:

Մարզի **շուրջ երեսուն համայնքներում** հիմնանորոգվել են ոռոգման համակարգերը, վերանորոգվել խորքային հորեր, կառուցվել պոմպակայաններ, կառուցվել և վերակառուցվել ոռոգման ներքին ցանցեր, ջրատարներ, ինքնահոս ջրագծեր և երրորդ կարգի ջրանցքներ:

Այսպես, 2010 թվականին շահագործման հանձնվեց Այգեհովիտի ոռոգման համակարգը, վերակառուցվեց **«Հայ-ֆրանսիական բարեկամության ջրանցք»** վերանվանված ավելի քան 15 կիլոմետր երկարությամբ Խաշթառակ-Լուսահովիտ-Դիտավան ջրագիծը, որն այժմ ոռոգում է ավելի քան 600 հեկտար հողատարածք:

2010-2011 թվականներին **Մովսես, Սևքար, Աչաջուր, Լուսաձոր, Կողբ, Արճիս, Հաղթանակ** համայնքներում վերականգնվել են երրորդ կարգի ջրանցքները, վերակառուցվել են **Բերդ, Թովուզ, Վերին Կարմիր Աղբյուր, Ներքին**

Նոյեմբերյանի նորաբաց պոմպակայանը

Կարմիր Աղբյուր, Մովսես համայնքների ոռոգման ցանցերը, ինչի շնորհիվ ոռոգելի է դարձել ավելի քան 550 հեկտար հողատարածք:

Ոսկեվան, Ոսկեպար, Բաղանիս և **Կոթի** համայնքերի հողտարածքները տարիներ շարունակ գրեթե չեն ոռոգվել ու վերածվել են խոտհարքների: 2011 թվականին Ոսկեպար գետից սնվող 37 կմ ընդհանուր երկարությամբ ոռոգման ինքահոս համակարգի գործարկման և ջրանցքների վերանորոգման արդյունքում **վերականգնվել է շուրջ 2,000 հեկտար հողերի ոռոգման հնարավորությունը**՝ առանց վնասելու Ոսկեպար գետի էկոհամակարգը:

2011 թվականին Տավուշի մարզում գործարկվեց վերազինված **«Նոյեմբերյան 1»** պոմպակայանը՝ Դեբեդ գետի վրա գտնվող վերականգնված պատվարի հետ համատեղ: Սա Հայաստանի տնտեսության ենթակառուցվածքներում երբևէ իրականացված ամենախոշոր հանրային կապիտալ ներդրումային ծրագրերից մեկն է: **Հաղթանակ, Զորավան, Կողբ, Բերդավան** համայնքների շուրջ հինգ հազար ջրօգտագործողների գրեթե չորս հազար հեկտար հողատարածքներին ոռոգման ջուր մատակարարող պոմպակայանում տեղադրվել են

«Հողերը ոռոգման տակ են, ապրուստի միջոցները կբազմանան, մարդիկ աշխատանք կունենան, ժողովուրդը արտերկիր քիչ կգնա»:

Արևիկ Մամյան, Բաղանիսի բնակչուհի

«Այս ջուրը, ինձ հնարավորություն է տալիս իմ տունը իմ աշխատանքով պահելու»:

Էլմիրա Աղամյան, Ոսկևանի բնակչուհի

երկու նոր պոմպեր, ամբողջությամբ վերազինվել է պոմպակայանի էլեկտրական ենթակայանն ու վերանորոգվել ջրընդունիչ հանգույցը, ինչի արդյունքում պոմպակայանում հոսանքի խնայողության ծախսերը կրճատվել են տարեկան ավելի քան ութ միլիոն դրամով:

Վերակառուցվել է **Աչաջրի** պոմպակայանի շենքը, ամբողջությամբ վերազինվել են երկու պոմպերը, ինչը անխափան ջրամատակարարում ապահովելու հնարավորություն է ընձեռում:

Վերականգնողական աշխատանքների շնորհիվ ընդհանուր առմամբ **ոռոգելի է դարձել շուրջ 7260 հեկտար** հողատարածք, այդ թվում՝ Իջևանի տարածաշրջանում՝ 1260 հեկտար, Նոյեմբերյանի տարածաշրջանում՝ 4000 հեկտար, Բերդի տարածաշրջանում՝ 2000:

2007-2011 թվականներին Հայաստանում գյուղատնտեսության զարգացմանն

Ոռոգման համակարգում 2007-2011թթ. իրականացված կապիտալ ծախսերի բաշխումն ըստ մարզերի (մլն. դրամ)



անմիջականորեն ուղղված հանրային կապիտալ ներդրումները գրեթե ամբողջությամբ հատկացվել են Տավուշի մարզին: Հանրապետությունում կապիտալ ծրագրերի 95 տոկոսն իրականացվել է Տավուշի մարզում:

Նշված ժամանակահատվածում **Ներքին Կարմիր Աղբյուր, Նորաշեն, Ազատամուտ** և **Վարագավան** համայնքներում ստեղծվել են կաթի ընդունման կետեր, **Այգեհովիտ** և **Սարիգյուղ** համայնքներում՝ ագրոբազաներ: Վերջիններն

Մինչև 2013 թվականը Տավուշի մարզում կիիմն-վի ավելի քան 310 հեկտար պտղատու այգի՝ դեղձ, ընկույզ, նուռ, պիստակ, նեկտարիտին:

արդեն ձեռք են բերել երեք անվավոր տրակտոր, գութան, շարքացան և կուլտիվատոր:

Մարզի մի շարք համայնքներում գործում են պտղի տնկարանային տնտեսություններ: Այգեձորում գործում է **«Այգեձորի տնկարան» ՍՊԸ-ն**, որը արտադրում և մատակարարում է խաղողի ֆիլոքսերադիմացկուն տնկիներ: 2010 թվականին Դիտավան համայնքում հիմնվել է տնկարան և կառուցվել 2 ջերմոց՝ արևելյան խուրմա, թուզ, նուռ, կիվի, զկեռ պտղատեսակների համար:

ՀՀ կառավարության աջակցությամբ **«Թամարա ֆրութ» ՓԲԸ-ն** 2009 թվականից մարզի հինգ համայնքներում հիմնել է մոշի, մոռի, հաղարջի շուրջ տասնհինգ հեկտար այգի, որից երեք հեկտարը՝ 2011 թվականին՝ Գանձաքար համայնքում: Եվս հինգ այգի կհիմնվի 2012 թվականին:

2010 թվականին մարզում ավելի քան **65 հեկտար հողատարածքում հիմնվել են ցորենի սերմնաբուծական տնտեսություններ**, իսկ 2011 թվականին Տավուշի հինգ՝ **Չինչին, Արծվաբերդ, Նավուր, Նոյեմբերյան, Բերդավան** համայքներում ստեղծվեցին ավելի քան 80 հեկտար ընդհանուր մակերեսով սերմնաբուծական տնտեսություններ:

2010 թվականին Տավուշի մարզում կառուցվել են ծխախոտի չորացման 17 խցեր, իսկ 2011 թվականին՝ ավելի քան երկու անգամ ավելի:

«Երեք կարգին այգի ունեմ նոր կառուցված ջրակայանի վրա: Ուրախ եմ. մինչև հիմա չարչարվել ենք, ստեղծել ենք, անջուր է եղել, տասներեք տարի չեմ ջրել: Հիմա վստահ եմ, որ լավ կլինի՝ բերք կստանանք»:

Վազգեն Դավթյան, Աչաջուր համայնքի պոմպակայանի աշխատակից

2010թ. **Սարիգյուղ** համայնքում ստեղծվել է մթերման կենտրոն, իսկ **Ակնաղբյուր** համայնքում՝ **«Ակնաղբյուրի և Լուսաձորի գյուղատնտեսական սպառողական կոոպերատիվների մթերման կենտրոն»** սառնարանային տնտեսությունը: 2011 թվականին **Արճիս** համայնքում կառուցվել է 60 տոննա հզորությամբ սառնարանային տնտեսությունը:

2011 թվականի տարեվերջին Տավուշի մարզում գործում էր ծխախոտի 100 չորանոց՝ կրկնակի ավելի, քան երկու տարի առաջ:

Իրականացվել են **Ներքին Ծաղկավան** համայնքում անասունների արոտավայրերի ջրարբիացման և համայնքի սարամասի **Կիրանց-Ներքին Ծաղկավան-Սևքար** վեց կիլոմետր հատվածի ճանապարհի ջրահեռացման աշխատանքներ:

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Տավուշի մարզի գյուղացիական տնտեսություններին մեծապես աջակցել է նաև ընթացիկ աշխատանքներում: Այսպես, 2011 թվականին երկրի կառավարությունը մարզի շ**ուրջ երեսուն համայնքների** տրամադրել է գարնանացան գարու ավելի քան քսանհինգ տոննա առաջին և շուրջ հիսունհինգ տոննա էլիտային վերարտադրության սերմացու, իսկ ավելի քան քառասուն համայնքի՝ քսանհինգ տոննա եգիպտացորենի սերմացու:

2010-2011 թվականներին Տավուշի մարզի **Սևքար, Այգեհովիտ, Լուսաձոր, Գետահովիտ, Ներքին Ծաղկավան, Ակնաղբյուր, Դիտավան, Լուսաձոր, Խաշթառակ, Լուսահովիտ, Վազաշեն** համայնքների շուրջ երկու հարյուր քա-

«Ծխախոտագործությունը ավելի կմեծանա: Հիմա ուզում ենք ջրանցքից ցած ծայրեծայր կարալյոկի այգիներ հիմնել»:

Սեյրան Սարգսյան, Դիտավանի գյուղապետ

Լուսաձորի անասնապահական համալիրը

ռասուն գյուղացիական տնտեսություններ ստացել են գրեթե **8,500 տնկիներ,** հիմնվել են ավելի քան **22 հեկտար այգիներ**:

Տավուշի մարզի տասնմեկ համայնքների հիսուն գյուղացիական տնտեսություններ ստացել են շվեյցարական հիսուն գլուխ «Ֆլեգվի» ցեղի կաթնամսատու տեսակի երինջներ՝ որպես տոհմային կորիզ, ինչպես նաև դանիական «Ձերսեյ» ցեղի 80 գլուխ չորս-հինգ ամսական հղի երինջներ, որոնք պահվում են **Լուսաձորում՝** նոր կառուցված անասնապահական համալիրում: Նախատեսվում է ծնված հորթերը տրամադրել գյուղացիական տնտեսություններին:

2010-2011 թվականներին ՀՀ կառավարությունը զեղչ գներով մեկական անվավոր տրակտոր է հատկացրել **Բերդ** և **Բերդավան** համայնքներին: Մարզի ութ համայնքների հնարավորություն է ընձեռվել կենսապարարտանյութ ձեռք բերել զեղչված գներով: 2011 թվականին Հայաստանի Հանրապետության կառավարությունը մարզի համայնքներին անվճար տրամադրել է **870 կիլոգրամ** մկնասպան թունանյութ, պայքարի աշխատանքներ են կատարվել շուրջ յոթ հար-

«Պետք է այնպես անենք, որ ոչ մի ողկույզ խաղող իզուր չկորչի Տավուշի մարզում»:

Երևանի կոնյակի գործարանի գործադիր տնօրեն Արա Գիրգորյան

յուր հեկտար հողատարածությունների վրա: Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերով կազմվել և տասնչորս համայնքների տրամադրվել է հողերի ագրոքիմիական քարտեզներ:

Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերով Տավուշի մարզում գյուղատնտեսության զարգացման գերակայություններին փոխկապակցված և ներդաշնակ զարգացել են գյուղատնտեսական արտադրանքի մշակող արդյունաբերության հզորություններն ու անհրաժեշտ ենթակառուցվածքները: Արդյունքում, մարզում ձևավորվել են բոլոր անհրաժեշտ նախապայմանները հետագա տարիներին ճգնաժամի և տարածաշրջանային հակամարտությունների հետևանքները հաղթահարելու և տնտեսական աճի՝ մինչև վերջին տարիներն անիրագործելի թվացող տեմպերի համար:

2011 թվականին. **Երևանի կոնյակի գործարանի Բերդի մասնաճյուղը**, **Բերդավանի գինու գործարանը**, **Իջևանի գինու և կոնյակի գործարանը**, **Երևանի շամպայն գինիների գործարանի Դեբեդավանի մասնաճյուղը** և **Տավուշի գինու գործարանը** մարզի ֆերմերներից մթերել են **շուրջ 8,000 տոննա խաղող**՝ մեկուկես անգամ ավելի, քան 2009 թվականին և գրեթե կրկնակի ավելի, քան նախաճգնաժամային 2008 թվականին: Գինու և կոնյակի

Երևանի կոնյակի գործարանի Բերդի մասնաճյուղ

արտադրության բոլոր ձեռնարկությունները ժամանակին կատարում են գյուղացիական տնտեսությունների հանդեպ պայմանագրերով սահմանված պարտավորությունները:

2008 թվականին, երկարատև դադարից հետո ՀՀ կառավարության աջակցությամբ վերագործարկվել է **Այրումի պահածոների գործարանը**: Գործում է դեղձի վերամշակման գիծը՝ օրական մինչև 200-250 տոննա դեղձ ընդունելու հնարավորությամբ:

2011 թվականին Լուսաձոր համայնքում գործարկվել են հացաթխման և պահածոների արտադրամասերը, **Այգեձոր** համայնքում՝ **«Էկոգարդեն»** արտադրական ձեռնարկությունը, որն առաջին իսկ տարում մթերեց շուրջ երեսուն տոննա պտուղ և հատապտուղ:

Վարգավանի պահածոների գործարանը միրգ և հատապտուղ է մթերում մարզի համայնքներից և մասամբ արտահանում արտադրանքը, ընդ որում՝ արդեն 2010 թվականին գործարանը մթերել է **մեկ քառորդով ավելի միրգ և հատապտուղ**, քան 2009 թվականին:

2011 թվականին **Լուսաձոր** համայնքում գործարկվել է **«Կոոպերատիվ խոհանոց»** ձեռնարկությունը, որտեղ գործում են հացի թխման, պահածոների և չրի պատրաստման արտադրամասեր, մթերային խանութ և սառնարանային տնտեսություն:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը Տավուշի մարզում 2011 թվականին կրկնապատկվել է 2001 թվականի համեմատ, իսկ արդյունաբերական արտադրանքի ծավալը՝ 1998 թվականի համեմատ աճել է ավելի քան վեց ու կես անգամ: Եթե մինչև 2006 թվականը արդյունաբերությունը մարզում տեսել է և՛ լավ, և՛ վատ տարիներ, ապա 2007 թվականից ի վեր այն զարգանում է աննահանջ: 2011 թվականին **արդյունաբերության**

Մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալը Տավուշի մարզում 2011 թվականին 2001 թվականի համեմատ գրեթե կրկնապատկվել է:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը Տավուշի մարզում (ընթացիկ գներով, մլն. դրամ)



2011 թվականին Տավուշի մշակող արդյունաբերությունը տվել է ավելի շատ արտադրանք, քան ճգնաժամին նախորդող որևէ տարում:

աճը Տավուշի մարզում գերազանցել է հանրապետության մի շարք մարզերի, այդ թվում Երևանին անհամեմատ ավելի մոտ գտնվող Արմավիրի, Արարատի և Վայոց Ձորի աճի ցուցանիշները:

Տավուշի արդյունաբերական արտադրության հիմնական հզորությունները մշակող արդյունաբերության հատվածում են: 2011 թվականին մարզի արդյու-

Արդյունաբերության հիմնական ոլորտները Տավուշի մարզում, 2011թ.



Էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրությունը և բաշխումը Տավուշի մարզում (ընթացիկ գներով, մլն. դրամ)



նաբերական արտադրանքի երկու երրորդը բաժին է ընկնում հենց մշակող արդյունաբերությանը:

Համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամի հետևանքները չշրջանցեցին նաև Տավուշի մարզը. 2009 թվականին մշակող արդյունաբերության արտադրանքի ծավալները կրճատվեցին գրեթե տասը տոկոսով: Մարզի տնտեսությունը, այդուհանդերձ, վերականգնում է ճգնաժամի հասցրած վնասները: 2007 թվականի համեմատ արտադրանքի ծավալն **ավելացել է շուրջ մեկ երրորդով**:

Տավուշի մարզում սննդամթերքի, այդ թվում՝ խմիչքների արտադրության ծավալները 2010 թվականին 2004 թվականի համեմատ աճել են ավելի քան մեկ քառորդով, ընդ որում, ճգնաժամի հետևանքով արտադրության ծավալների անկումը հետևողական կերպով վերականգնվում է:

Տավուշի մարզում էլեկտրաէներգիայի, գազի, ջրի արտադրության և բաշխման ծավալները նախորդ տասնամյակում հետևողականորեն աճել են:

2011 թվականին էներգետիկ հատվածում արդյունաբերությունը 2001 թվականի համեմատ ավելի քան եռապատկվել է, իսկ 2007 թվականի համեմատ արտադրանքի ծավալներն աճել են ավելի քան 40 տոկոսով:

«Հին Դիլիջան Թուֆենկյան» հյուրանոցը

«Բեսթ վեսթերն փարադայս» հյուրանոցը

Տավուշի մարզում 2010 թվականին հանքագործական արդյունաբերության ծավալները կազմել են 2001 թվականի **տասնապատիկը**, իսկ 2007 թվականի համեմատ՝ աճել են **ավելի քան երկուսուկես անգամ**:

2010-2011 թվականներին Տավուշի մարզի արդյունաբերական արտադրանքի ընդհանուր ծավալի **կեսից ավելին թողարկում են փոքր և միջին ձեռնարկությունները**, ինչը նշանակում է, որ մարզի տնտեսությունը զարգանում է համաչափորեն և մեծապես զերծ է մնացել Հայաստանի տնտեսության համար բնութագրական մի շարք նախաճգնաժամային մարտահրավերներից:

2011 թվականին մարզում ստեղծված նոր կայուն աշխատատեղերի բացարձակ մեծամասնությունը ջերմոցային տնտեսություններում և վերամշակող ձեռնարկություններում է, ինչը նույնպես հաստատում է մարզի տնտեսության ներդաշնակ զարգացման միտումը:

2011 թվականին Դիլիջանում շահագործման հանձնվեց **«Բեսթ վեսթերն փարադայս»** հյուրանոցը: Շուրջ 4 տարի տևած վերակառուցման և տեխնիկական վերազինման ընթացքում ներդրվել է **յոթ միլիոն ԱՄՆ դոլար:** Աշխատակազմի 90 տոկոսից ավելին միջազգային չափանիշներին համապատասխան որակավորման դասընթացներում վերապատրաստված տեղական աշխատուժն է: «Բեսթ վեսթերնը» աշխարհի խոշորագույն հյուրանոցային ցանց է, որը գործում է ավելի քան 80 երկրում և ընդգրկում է 4,000-ից ավելի հյուրանոց: Հյուրանոցային համալիրն ունի շուրջ վաթսուն հարմարավետ և բարձրակարգ համար, ռեստորան, բացօթյա սրճարան, 150 անձի համար նախատեսված նիստերի դահլիճ, լողավազան, մարզասրահ, մանկական խաղասրահ:

2013 թվականին շահագործման կհանձնվի **ՀՀ Կենտրոնական բանկի «Դիլիջան ուսումնահետազոտական կենտրոնը»**. ժամանակակից տեխնի-

«Կարծում եմ «Բեսթ վեսթերն փարադայսը» տարածաշրջանում կարևորագույն հյուրանոցը կդառնա: Ունենք խորհրդակցությունների մեծ դահլիճ, որը նախատեսված է մինչև 150 հոգու համար: Հաշվի առնելով, որ Դիլիջանը շուտով դառնալու է ֆինանսական կենտրոն՝ սա մեծ օժանդակություն է նաև տեղի գործարարներին»:

Արսեն Բաղդասարյան, «Բեսթ վեսթերն փարադայս» հյուրանոցի կառավարիչ

կական ու տեխնոլոգիական լուծումներով հագեցած ինստիտուտ, որն ի զորու է հյուրընկալելու տարածաշրջանային ու միջազգային տարեկան ավելի քան 30 միջազգային չափանիշներին համապատասխանող կոնֆերանսներ, ուսումնական ծրագրեր, կազմակերպելու ազգային ու տարածաշրջանային դասընթացներ, որոնց համար կներգրավվեն միջազգային ճանաչում ունեցող տնտեսագետներ: Կենտրոնի աշխատակիցների համար կառուցվում է բազմաբնակարան շենք, որի առաջին հարկում կտեղակայվեն մանկապարտեզ և առևտրային կենտրոններ: Տարածքներ են նախատեսվում նաև առևտրային բանկերի ու վարկային կազմակերպությունների համար:

2011 թվականից **ՎՏԲ-Հայաստան Բանկի «Նոյեմբերյան» մասնաճյուղը** գործում է նոր՝ վերանորոգված և վերազինված մասնաճյուղում, որը համալրված է ժամանակակից համակարգչային տեխնիկայով, հատուկ սարքավորումներով, գրասենյակային կահույքով և հաղորդակցության բոլոր անհրաժեշտ միջոցներով: Մասնաճյուղի ավելի քան 4,000 հաճախորդները հարմարավետ պայմաններում որակով և արագ սպասարկման հնարավորություն են ստացել:

2008-2011 թվականներին Տավուշի մարզի բոլոր տարածաշրջաններում բացվել են հանրապետության խոշորագույն առևտրային բանկերի ութ

ՀՀ Կենտրոնական բանկի «Դիլիջան ուսումնահետազոտական կենտրոնի» շինարարությունն ընթանում է մեծ թափով

մասնաճյուղեր: Նույն ժամանակահատվածում մարզում տեղադրվել են առևտրային բանկերի ավելի քան 16 բանկոմատներ:

2007-2011 թվականներին շուրջ հարյուր միլիոն դրամ ներդրումների արդյունքում, Իջևան-Նոյեմբերյան և Իջևան-Բերդ ավտոմայրուղիների խաչմերուկում, Աղստև գետի, Մակարավանքի ու Կիրանցի պատմամշակութային կոթողների հարևանությամբ գործարկվել է **«Մայիսյան Կամուրջ»** հյուրանոց-ռեստորանը: Նույն ժամանակահատվածում ավելի քան մեկ միլիարդ դրամ ընդհանուր ծավալով ներդրումների արդյունքում Ենոքավան համայնքում գործարկվել է **«Ապագա տուր»** հանգստյան գոտին, իսկ Իջևանում՝ **«Իջևանատուն»** հյուրանոցային համալիրը: Տուրիզմի զարգացումը խթանելու նպատակով մարզի մի շարք համայնքներում կառուցվում են կոյուղու համակարգեր, սկսվում է Դիլիջան քաղաքի մաքրման կայանի և կոյուղու կոլեկտորի շինարարությունը:

Տավուշի մարզում, 2009 թվականից սկսած, աննախադեպ կերպով ավելացել են շինարարության ծավալները՝ 2010 թվականին կազմելով **շուրջ 16.5 միլիարդ դրամ**:

2010 թվականին Տավուշի մարզում շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը երեքուկես անգամ գերազանցել է Սյունիքի, Արմա-

Շինարարության ծավալները Տավուշի մարզում (ընթացիկ գներով, մլն. դրամ)



«Երրորդ տարին է աշխատում եմ կառույցի շինարարության վրա: Ինձ նման շատ-շատ դիլիջանցիներ այստեղ աշխատանք են գտել և իրենց ընտանիքները ապահովում են»:

Գագիկ Հովհաննիսյան, շինարար

«Կառուցում ենք միջազգային դպրոց, շինարարության ընթացքում բազմաթիվ աշխատատեղեր են բացվել դիլիջանցիների համար, ինչը նպաստում է, որ հանրապետությունից մարդիկ չհեռանան: Ես շատ մեծ հույսեր եմ կապում Դիլիջանի հետ: Իմ կարծիքով՝ մոտ ժամանակներս, մի երեք-չորս տարի հետո, Դիլիջանը կմեծանա-կընդլայնվի ու կդառնա հանրապետության լավագույն քաղաքը. բոլորը կցանկանան գալ Դիլիջան»:

Կառլեն Դավթյան, շինարար

2007-2010 թվականներին՝ չորս տարում, մարզում իրականացված շինարարության աշխատանքների ընդհանուր ծավալը նույնքան է, որքան 1998-2006 թվականներին՝ ինը տարում:

վիրի և Վայոց Ձորի մարզերում շահագործման հանձնված բնակելի շենքերի ընդհանուր մակերեսը:

Միջին հաշվով բնակչության մեկ շնչին ընկնող առևտրի շրջանառությունը (դրամ)



2011 թվականին Տավուշի մարզում խանութների առևտրի շրջանառության ծավալները 2002 թվականի համեմատ քառապատիկ մեծացել են:

Վերջին 15 տարիների ընթացքում մանրածախ առևտրի շրջանառությունը Տավուշում հետևողականորեն աճել է՝ 2011 թվականին գերազանցելով ավելի քան 15 միլիարդ դրամի շեմը:

2011 թվականին Տավուշի մարզում գործում էին մանրածախ առևտրի նույնքան օբյեկտներ, որքան Արագածոտնի, Սյունիքի և Վայոց Ձորի մարզերում միասին վերցրած:

Տավուշում տարեց-տարի ավելացել է խանութների քանակն ու մեծացել նրանց առևտրի շրջանառությունը: 2011 թվականին Տավուշի մարզում գործում

Ծառայությունների ծավալը Տավուշի մարզում (մլն. դրամ)

էին **երեք անգամ ավելի շատ** խանութներ, քան 2002 թվականին, ընդ որում, 2011 թվականին Տավուշում գործում էին գրեթե նույնքան խանութներ, որքան

2011 թվականին բնակչության մեկ շնչին ընկնող առևտրի շրջանառության ծավալը Տավուշի մարզում 2001 թվականի կրկնակին է և ավելին է, քան հարևան Վրաստանում:

2011 թվականին մանրածախ առևտրի շրջանառությունը Տավուշի մարզում 2000 թվականի համեմատ կրկնապատկվել է, իսկ մանրածախ առևտուր իրականացնող օբյեկտների թիվն ավելացել 80 տոկոսով:

Արագածոտնի, Վայոց Ձորի, Սյունիքի և Արմավիրի մարզերում միասին վերցրած:

Միջին հաշվով բնակչության մեկ շնչին ընկնող առևտրի շրջանառության ծավալով Տավուշի մարզը 2011 թվականին Հայաստանում զիջում էր միայն մայրաքաղաք Երևանին, Շիրակի և Կոտայքի մարզերին:

Ծառայությունների ծավալը Տավուշի մարզում տարեց-տարի մեծացել է՝ անգամ ճգնաժամի տարիներին: 2011 թվականին ծառայությունների ծավալը Տավուշում կազմել է շուրջ վեց միլիարդ դրամ՝ գրեթե **կրկնակի ավելի,** քան

Արտահանման ծավալները Տավուշում (մլն. դրամ)



2007 թվականին:

2011 թվականին Տավուշի մարզից արտահանման ծավալները հասել են անկախ Հայաստանի պատմության մեջ **աննախադեպ մակարդակի**՝ շուրջ 700 միլիոն դրամ, ինչը 2000 թվականի համեմատ **հնգապատիկ** ավելի է, իսկ 2008 թվականի նկատմամբ **կրկնապատկվել է**:

Ենթակառուցվածքներ

Նախորդ տասնամյակում Տավուշի մարզում զգալիորեն զարգացել են ենթակառուցվածքները, որոնց աճը գրեթե բոլոր ճյուղերում չափվում է անգամներով: Մարզում ենթակառուցվածքների զարգացումը, տավուշ-

Գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը Տավուշում (կմ)



Գյուղական վայրերում գազի փողոցային գործող ցանցի միագիծ երկարության հարաբերական աճը 2004-2010թթ.



2011 թվականին գազի բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունը Տավուշի մարզում 2000 թվականի համեմատ եռապատկվել է:

ցու պատվախնդրության հետ զուգակցված, դարձել է մարզի գյուղատնտեսության և արդյունաբերության աստիճանական զարգացման, անվտանգության ապահովման, ֆինանսա-տնտեսական ճգնաժամի ու բազմաթիվ տարերային աղետների հետևանքների հաղթահարման կռվանը:

Բոլոր սպառողներին բաց թողնված գազի ծավալների հարաբերական աճը 2001-2010թթ



Տավուշի գյուղական համայնքներում 2010 թվականին գազաֆիկացված էր վեց անգամ ավելի շատ բնակարան ու առանձնատուն, քան 2002 թվականին:

ՀՀ կառավարության ջանքերով շարունակում են զարգանալ գազի բաշխիչ ենթակառուցվածքները Տավուշի գյուղական համայնքներում: 2004 թվականի համեմատ՝ 2011 թվականին գյուղական համայնքներում բաշխիչ գործող ցանցի միագիծ երկարությունն **ավելի քան հնգապատկվել է**՝ 80 կիլոմետրից հասնելով 412 կիլոմետրի: Նման կտրուկ աճ հանրապետությունում արձանագրվել է միայն երկու մարզում՝ Վայոց Ձորում և Տավուշում: Գազաֆիկացված բնակարանների և բնակելի տների քանակը Տավուշի մարզում 2010 թվականին 2002 թվականի համեմատ գրեթե քառապատկվել է: Եթե 2002 թվականին գազաֆիկացված էր Տավուշի մարզի բնակարանների և առանձնատների 17 տոկոսը, ապա 2010 թվականին գազաֆիկացված էր արդեն մարզի բնակարանների և



բնակելի տների շուրջ **60 տոկոսը**: 2002 թվականին գազաֆիկացված էր մարզի գյուղական համայնքների միայն 8 տոկոսը, իսկ 2010 թվականին՝ արդեն 45 տոկոսը, ավելի շատ, քան Վայոց Ձորի, Արագածոտնի, Սյունիքի և Շիրակի մարզերում:

Համանման տեմպով զարգացել են նաև Տավուշի մարզի խմելու ջրի ենթակառուցվածքները: 2010 թվականին մարզի ջրատարների ընդհանուր միագիծ երկարությունը 2001 թվականի գրեթե **եռակին էր:**

Ենթակառուցվածքներում կատարված ներդրումների և ջրամատակարարման համակարգի կառավարման արդյունավետության բարձրացման արդյունքում 2010 թվականին ջրի սպառումը մարզում 2002 թվականի համեմատ կրճատվել է կիսով չափ: 2010 թվականին կոյուղու համակարգի փողոցային ցանցի միագիծ երկարությունը Տավուշի մարզում 2002 թվականի համեմատ ավելացել է տասը տոկոսով:

2010 թվականին Տավուշի մարզում սպառվել է ութապատիկ ավելի մեծ ծավալով գազ, քան 2001 թվականին, իսկ Տավուշի գյուղական համայնքներում նույն ժամանակահատվածում գազի սպառման ծավալներն ավելացել են տասնապատիկ:

Արզն աստիճանաբար վերականգնվում է 2008 թվականի ճգնաժամի հետևանքներից. եթե 2008 թվականի տարեվերջի արդյունքներով փոխադրված բեռների ծավալը 2007 թվականի համեմատ կրճատվեց ավելի քան քառասուն տոկոսով, ապա արդեն 2010 թվականին բեռնափոխադրման ծավալները վերականգնվեցին՝ հասնելով նախաճգնաժամային՝ տարեկան շուրջ 700 հազար տոննա ցուցանիշին:

Աստիճանաբար ավելացել են նաև ուղևորափոխադրության ծավալները. 2010 թվականին Տավուշի մարզում փոխադրվել է **շուրջ երկու անգամ ավելի շատ ուղևոր,** քան 2000 թվականին:

Բեռնափոխադրության ծավալները Տավուշի մարզում (հազ. տոննա)



Այրում կայարանը

Տավուշի մարզում 2010 թվականին բեռնափոխադրության ծավալները 2000 թվականի համեմատ քառապատկվել են:

2010-2011 թվականներին կազմվել են Դիլիջանի և Իջևանի զբոսաշրջային քարտեզները: 2011 թվականին մարզում հանգստացել են **ավելի քան վաթսուն հազար զբոսաշրջիկներ**՝ 2010 թվականի համեմատ կրկնակի անգամ ավելի, և սա՝ առանց անհատական բնակարաններում և փոքր հյուրանոցային համալիրներում հանգստացողների թվի:

Տավուշի մարզում քաղաքների փողոցների, անցումների և հրապարակների ընդհանուր մակերեսն աստիճանականորեն ընդարձակվել է՝ 2010 թվականին ավելանալով 2001 թվականի համեմատ գրեթե տասներորդ չափով, ընդ որում, եթե 2001-2005 թվականներին քաղաքների փողոցների, անցումների և հրապարակների բարեկարգված մակերեսն աստիճանաբար կրճատվել է, ապա 2006-ից այն ավելացել է գրեթե նույնչափ:

Տավուշի մարզում 2007-2011 թվականներին իրականացված կապիտալ ծրագրերի առյուծի բաժինն ուղղվել է մարզում ենթակառուցվածքների զարգացմանը, և առաջին հերթին՝ ճանապարհաշինությանը. Տավուշում իրականացված կապիտալ ներդրումների ավելի քան մեկ երրորդը հատկացվել է մարզում հանրապետական և տեղական ավտոմոբիլային ճանապարհների հիմնանորոգմանն ու ինժեներական կառույցների վերանորոգմանը:

2007-2011 թվականներին Տավուշի չորս քաղաքային և երեսունմեկ գյուղական համայնքներում իրականացվել են ավելի քան **8.1 միլիարդ դրամ ընդհանուր ծավալով ճանապարհաշինական կապիտալ ծրագրեր**: 2007-2011 թվականներին Հայաստանում ճանապարհաշինությանը հատկացված ֆինանսական միջոցների գրեթե մեկ հինգերորդը ներդրվել է հենց Տավուշում: Նշված ժամանակահատվածում Տավուշի մարզում ճանապարհաշինությանն ուղղված ներդրումների ծավալն ամենամեծն է երկրում և գերազանցում է այս ուղղությամբ Արմավիրի, Արագածոտնի, Շիրակի և Սյունիքի մարզերում իրականացված ներդրումների ծավալը:

2007-2011թթ. Տավուշի մարզում իրականացված կապիտալ ծախսերի բաշխումն ըստ հիմնական ոլորտների



Այս ժամանակաշրջանում, մասնավորապես, հիմնանորոգվել կամ վերանորոգվել են **Իջևան - Բերդ - Արծվաբերդ - Այգեձոր - Չինարի** և **Իջևան - Նավուր - Բերդ - Այգեպար** ավտոճանապարհները, **Իջևան - Գանձաքար** հանրապետական նշանակության շուրջ յոթ կիլոմետր ընդհանուր երկարությամբ և միջպետական մայրուղուն **Խաշթառակ** և **Լուսահովիտ** համայնքները կապող ավելի քան հինգ կիլոմետր երկարությամբ ավտոճանապարհները, **Մովսեսգյուղ - Նորաշեն - Վերին Կարմիր Աղբյուր** շուրջ ինը կիլոմետր երկարությամբ ավտոճանապարհը, ավելի քան յոթ կիլոմետր երկարությամբ **Բերդ - Թովուզ - Ներքին Կարմիրաղբյուր** ավտոմոբիլային ճանապարհը, **Այգեհովիտ - Վազաշեն - Պառավաքար - Այգեպար** և **Ոսկեպար - Նոյեմբերյան**, **Նոյեմբերյան - Դովեղ** ավտոճանապարհները, **Հաղարծին**, **Գոշ**, **Սևքար** և **Ծաղկավան** համայնքները հանրապետական և մարզային նշանակության ճանապարհներին կապող ավտոճանապարհները:

Կառուցվել է **Հովքի** շրջանցիկ ճանապարհը, բազմաթիվ համայնքներում վերանորոգվել են համայնքային ճանապարհները, ընդ որում, առաջին հերթին՝ դպրոց տանող ճանապարհները: Մասնավորապես, վերանորոգվել են Դիլիջան քաղաքի **Անդրանիկի թաղամաս** տանող ճանապարհը, շուրջ երեք կիլոմետր երկարությամբ **Սայաթ-Նովա փողոցը**, **Գորկի-Մյասնիկյան**, և **Հակոբջանյան** փողոցները, **Աղավնավանքի** վերին և ներքին թաղամասերը կապող գետանցի ճանապարհը, Իջևանում՝ **Մյասնիկյան** փողոցը, **ՍՈՍ մանկատան ճանա-**

Դիլիջանի արգելանոցում

«Միմինոյի» արձամախումբը Դիլիջանում

Հաղարծինի վանքային համալիրը

պարհը, **Երիտասարդական** և **Գանինի** փողոցները, **Մետաղագործների թաղամասի ճանապարհը, Իջևանյան** և **Ասլանյան** փողոցները, դպրոց տանող ճանապարհները **Իջևան**, **Գոշ**, **Գանձաքար**, **Նոյեմբերյան**, **Դովեղ** և **Դիլիջան** համայնքներում:

Վերականգնվել է **Վարագավանք** տանող շուրջ երկու կիլոմետր երկարությամբ ասֆալտապատ ճանապարհը, **Մակարավանքի** հուշարձան տանող **Աչաջուր - Մակարավանք** ճանապարհը, **Հաղարծնի** վանք տանող ճանապարհը ինչը մեծապես նպաստում է մարզում զբոսաշրջության զարգացմանը:

2008-2011 թվականներին Տավուշի մարզային նշանակության ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքներին հատկացվել է ավելի քան **252 միլիոն դրամ,** իսկ միջպետական և հանրապետական նշանակության ավտոճանապարհների ձմեռային, ընթացիկ պահպանության և շահագործման աշխատանքներին միայն 2011 թվականին ՀՀ պետական բյուջեից հատկացվել է ավելի քան **կես միլիարդ դրամ:**

Տավուշի մարզի քաղաքային և գյուղական շուրջ երեսուն համայնքներում 2007-2011 թվականներին իրականացվել են ավելի քան **երկու միլիարդ դրամ** ընդհանուր ծավալով ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի՝ մայր ջրատարների և ջրագծերի ներքին ցանցի վերականգնման և վերակառուցման կապիտալ ծրագրեր:

Մասնավորապես, 2010-2011 թվականներին հիմնանորոգվել են **Իջևան** քաղաքի ներքին ցանցը, **Կիրանց** համայնքի ջրամատակարարման ցանցը, Գանձաքար համայնքում կառուցվել է ավելի քան երկու կիլոմետր, իսկ **Խաչարձան** և **Աղավնավանք** գյուղերում՝ շուրջ մեկուկես կիլոմետր երկարությամբ ջրագիծ, հիմնանորոգվել է **Բերդ** քաղաքի ջրամատակարարման «**Սորանի**» կայանը, վերակառուցվել և վերականգնվել՝ **Նոյեմբերյան, Այրում, Դեղձավան, Բերդավան, Հաղթանակ, Դիտավան, Կիրանց, Արծվաբերդ, Վերին Կարմիր Աղբյուր, Չինարի, Չորաթան, Վազաշեն, Գանձաքար, Հաղարծին, Աչաջուր, Գետահովիտ, Ակնաղբյուր** համայնքների խմելու ջրի ջրամատակարարման համակարգերը:

ՀՀ նախագահ Սերժ
Սարգսյանը Տավուշի մարզում
նոր ջրագծի բացմանը

Վերականգնվում է **Բերդի խմելու ջրերի մաքրման կայանը**, որի արդյունքում էապես կբարելավվի ջրի որակը, իսկ ջրամատակարման տևողությունը Բերդում կավելանա 2-2,5 ժամով:

2012 թվականին **Այգեպարում՝** երկուսուկես և **Ոսկևանում՝** չորս կիլոմետր երկարությամբ խողովակաշարերի և ենթակառուցվածքների վերակառուցումը մշտահոս խմելու ջրով կապահովի համայնքի բնակիչներին:

Տավուշի մարզում շուրջ **15,300 ջրաչափերի տեղադրման** գործընթացին զուգահեռ՝ նվազել են ջրի անհարկի կորուստները, իսկ ջրամատակարարման տևողությունը մարզում ավելացել է միջինը 5 ժամով:

2007-2011 թվականներին Տավուշի մարզի տասնյոթ քաղաքային և գյուղական համայնքների գազաֆիկացման նպատակով կատարվել են շուրջ **9.5 միլիարդ դրամ ընդհանուր ծավալով** կապիտալ ներդրումներ:

2010-2011 թվականներին գազաֆիկացվել են **Ենոքավան**, **Հաղարծին**, **Վերին Կարմիր Աղբյուր** և **Չինարի** համայնքները: Միայն 2011 թվականին մարզի տարածքում վերականգնվել և վերակառուցվել են **ինը կիլոմետր գազատարներ**, իսկ շահագործվող գազատարների ընդհանուր երկարությունն ավելի քան 800 կիլոմետր է:

2012 թվականի տարեսկզբին Տավուշի մարզում գազաֆիկացումը վերականգնված էր ավելի քան **24,600 բնակարաններում,** որոնցից ավելի քան յոթ հազարը՝ բազմաբնակարան շենքերում, իսկ ավելի քան 17,500-ը՝ առանձնատներում:

2010-2011 թվականներին տավուշցիների համար ապահովվել է անխափան և առանց էական վթարների էներգամատակարարում: Տավուշի մարզում փոխվել է ավելի քան **800 հենասյուն** (տեղադրվել են բացառապես երկաթբետոնե հենասյուներ), ամբողջությամբ վերանորոգվել են **120 տրանսֆորմատորային ենթակայաններ**, իսկ գործող ցանցին են միացվել ավելի քան **180** նոր տրանսֆորմատորային ենթակայաններ, նորոգվել են շուրջ **123 կիլոմետր ընդհանուր երկարությամբ** բարձր լարման և ավելի քան **235 կիլոմետր** ընդհանուր երկա-

ությամբ ցածր լարման մալուխներ, **1,370 կիլոմետր** ընդհանուր երկարությամբ բարձր լարման և շուրջ երկու միլիոն գծամետր ընդհանուր երկարությամբ ցածր լարման օդային գծեր, ընդ որում, վերջինի շուրջ կեսը փոխարինվել է նորով:

Նշված ժամանակահատվածում տեղադրվել են ավելի քան երեսուն գերժամանակակից սարքավորումներ՝ բջիջներ, 220 միլիոն դրամ ընդհանուր արժեքով: Եթե 2009 թվականին մարզում գրանցվել են 336 ժամ ընդհանուր տևողությամբ հարկադիր անջատումներ, ապա 2010 թվականին դրանց քանակը կրճատվել է **շուրջ մեկ քառորդով**: Գրանցվել է 270 ժամ անջատում, ինչը կատարված ներդրումների և տավուշցիների նպատակասլացության հանրագումարի արդյունքն է:

2010-2011 թվականներին Տավուշում կառուցվել են ինը փոքր ՀԷԿ-եր՝ շուրջ յոթ մեգավատ ընդհանուր հզորությամբ:

Տավուշի գյուղական համայնքների մեծ մասում նախկին անալոգային ավտոմատ հեռախոսակայանները փոխարինվել են **թվային եթերային հեռախոսակապի** կայանքներով: 2011 թվականից Տավուշի մարզի Տավուշ համայնքում հասանելի դարձավ «**Hi-Line» ծառայությունը**: Թվայնացման և վերազինման արդյունքում լարային ցանցով «Hi-line» ինտերնետ կապից Տավուշի մարզում 2011 թվականին օգտվում էր **շուրջ 3,700 բաժանորդ**, այդ թվում՝ 1,240-ը՝ Իջևանի, 1,070-ը՝ Դիլիջանի, 700-ը՝ Նոյեմբերյանի և 670-ը՝ Բերդի տարածաշրջաններում:

Ներկայում մարզի գյուղական համայնքներն ապահովված են հուսալի ինտերնետ կապով. գյուղական համայնքներում համացանցի ծառայությունից օգտվում են ավելի քան 1,300 բաժանորդներ:

Մարզի տարածքում բջջային հեռախոսակապն ապահովվում է նորագույն սարքավորումների միջոցով: **Դիլիջանում** երկու և **Արծվաբերդ, Չինչին, Այգեձոր, Գանձաքար, Վազաշեն, Կոթի, Սարիգյուղ, Հաղարծին** և **Թեղուտ** գյու-

ղերում մեկական վերահաղորդիչ կայանների տեղակայման արդյունքում մարզի տարածքի ավելի քան **97 տոկոսում** ապահովվել է բջջային հեռախոսակապ:

2010-2011 թվականներին Նոյեմբերյան քաղաքում և Տավուշ գյուղում բացվել են գերարագ ինտերնետով՝ Orange-ի Flybox3Գ+ երթուղիչով և սարքավորումներով ապահովված և կահավորված հարմարավետ համակարգչային արդիական կենտրոններ, ինչը քաղաքի և գյուղի բնակիչներին հնարավորություն է տալու ոչ միայն կապի մեջ լինել աշխարհի հետ, այլ նաև մասնակցել համակարգչային դասընթացների:

2011 թվականից Տավուշի մարզի մի շարք քաղաքային և գյուղական համայնքներում հասանելի է նաև **«ՋիԷնՍի-Ալֆա»** համապետական ծածկույթի 10 Գբ/վ թողունակությամբ IP/MPLS ցանցը, որի հանգույցները հագեցված են ամերիկյան «Juniper Networks» ֆիրմայի արտադրության գերժամանակակից սարքավորումներով, ինչը տավուշցիներին և մարզի կազմակերպություններին հնարավորություն է ընձեռում ստանալ IP տարանցման, ինտերնետ հասանելիության, տվյալների հաղորդման, վիրտուալ մասնավոր ցանցերի (VPN) և այլ ծառայություններ: Ցանցի ընդլայնումը մարզում մեծապես նպաստեց Տավուշում ինտերնետի ներթափանցման մակարդակի, կազմակերպությունների ու բնակչության համար տեղեկատվական ռեսուրսների հասանելիության աճին:

2009 թվականից Տավուշի տարածքային կառավարման գործավարությունն իրականացվում է էլեկտրոնային փաստաթղթաշրջանառության միջոցով՝ զգալիորեն բարձրացնելով կառավարման արդյունավետությունը մարզում:

2011 թվականին հիմնովին վերակառուցվեց մարզպետարանի **էլեկտրոնային կայքը**՝ էապես մեծացնելով մարզում պետական կառավարման և Տավուշի համայնքներում տեղական ինքնակառավարման թափանցիկությունն ու հաշվետվողականությունը: Քաղաքացիներն այժմ հնարավորություն ունեն անմիջականորեն ծանոթանալու մարզում ծրագրված և իրականացրած աշխատանքներին, հանրային ծառայությունների մատուցմանը վերաբերող տե-

ղեկություններին, մարզում պետական կառավարման մարմինների հաշվետվություններին: 2011 թվականին մարզի պաշտոնական կայքում միջին հաշվով գրեթե ամեն աշխատանքային օր տեղադրվել է **տեղեկատվություն**, ինչն անհրաժեշտ է Հայաստանում գործող պետական, գործարար, հասարակական և միջազգային կառույցների ճնշող մեծամասնության համար:

2011 թվականի դրությամբ Տավուշի մարզի համայնքների մեծ մասում տեղական ինքնակառավարման մարմինները համաձայն հաստատված ժամանակացույցի անցկացնում են հաշվետու ժողովներ և հանրությանն են ներկայացնում տվյալ ժամանակահատվածում կատարվող աշխատանքների ընթացքն ու արդյունքները: Տավուշի համայնքներից երեք քառորդի՝ 60 համայնքներից 44-ի հաշվետվությունները 2012 թվականի տարեսկզբին տեղադրված էին համացանցում:

Տավուշի մարզպետարանի կայքը



2007-2011 թվականներին Բերդ քաղաքում կառուցվել, իսկ Նոյեմբերյան քաղաքում՝ վերանորոգվել է **դատարանի շենքը**՝ հնարավորություն ընձեռելով քաղաքացիներին դատավարություններին մասնակցել արժանապատիվ ու քաղաքակիրթ պայմաններում:

Բնակարանաշինություն

Տավուշի մարզում 2011 թվականին բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը 2000 թվականի համեմատ ավելացել է ավելի քան **40 տոկոսով**, ընդ որում, մարզի գյուղական համայնքներում բնակարանային ֆոնդը նույն ժամանակահատվածում **ավելացել է մեկուկես անգամ**:

Բնակարանային ֆոնդի ընդհանուր մակերեսը (քմ)



Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով Տավուշի մարզում **ամենաբարձրերից մեկն է** հանրապետությունում՝ 33 քառակուսի մետր. այս ցուցանիշով մարզը զիջում է միայն Արմավիրի և Վայոց Ձորի մարզերին: Ընդ որում, 2011 թվականին 2000 թվականի համեմատ տավուշցու ապահովվածությունն ընդհանուր մակերեսով ավելի քան **երկուսուկես անգամ բարելավվել է**:

2002 թվականի համեմատ՝ 2011 թվականին Տավուշի մարզի քաղաքային համայնքներում **ավելի քան մեկ հինգերորդով ավելացել են** թե՛ բնակարաննե-

Ընդհանուր մակերեսով մեկ բնակչի ապահովվածությունը Տավուշում 60 տոկոսով ավելին է, քան մայրաքաղաք Երևանում և գերազանցում է հանրապետության միջին ցուցանիշը ավելի քան մեկ հինգերորդով:

րի, թե՛ բնակելի տների քանակը: Նույնչափ ավելացել է նաև դրանց ընդհանուր մակերեսը: Գյուղական բնակավայրերում նույն ժամանակահատվածում բնակելի տների **քանակն ավելացել է տասը տոկոսով**, մինչդեռ դրանց ընդհանուր մակերեսն ավելացել է մեկուկես անգամ:

Տավուշի մարզում նախաճգնաժամային տարիներին անշարժ գույքի շուկայի ակտիվությունն աստիճանաբար աճեց: 2007 թվականին բազմաբնակարան շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակը տարեկան հասավ գրեթե 290-ի՝ 2000 թվականի համեմատ աճելով 3.5 անգամ: Թեև 2009 թվականին այդ գործարքների քանակը կրճատվեց ավելի քան երկու անգամ, իսկ բնակելի տների և հողերի առուվաճառքի գործարքների քանակը՝ համապատասխանաբար 30 և 90 տոկոսով, այդուհանդերձ, 2010-2011 թվականներին իրավիճակը բարելավվեց: Առուվաճառքի նշված բոլոր գործարքների թիվն **անշեղորեն աճում է** և արդեն հասել է 2005-2006 թվականների մակարդակին, իսկ մոտ ապագայում անշարժ գույքի շուկայում գործարքների ակտիվությունը

Մեկ բնակչի ապահովվածությունն ընդհանուր մակերեսով 2011թ



կգերազանցի նախաճգնաժամային ձեռքբերումները:

Նախաճգնաժամային տարիներին ակտիվացավ նաև համայնքների գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության գործընթացը: Թեպետ 2008 թվականին վարձակալության գործարքների թիվը 2007 թվականի համեմատ կրճատվեց ավելի քան 60 տոկոսով, իսկ վարձակալված հողերի ընդհանուր մակերեսը կրճատվեց գրեթե հնգակի, սակայն 2009-2010 թվկանաններին տնտեսության ակտիվացման և հակաճգնաժամային արդյու-

«Տունս գտնվում էր սողանքի գոտում: Վարարումների, փլուզումների պատճառով շարքից դուրս եկավ, պետության կողմից տրամադրված աջակցությամբ ձեռք բերեցինք հողամաս, և այդ հողամասում տուն ենք կառուցել»:

Լյովա Աղաջանյան,
Հաղարծին համայնքի բնակիչ

«Իմ տունը գտնվում էր սողանքի գոտում: Սողանքից փլվեց. գետը քանդեց տունս: Պետության, կառավարության տված գումարով ես տուն եմ կառուցել. սա էլ տունս է»:

Մարտուն Աղաջանյան,
Հաղարծին համայնքի բնակիչ

նավետ միջոցառումների իրականացման արդյունքում արդեն 2010 թվականին վարձակալության գործարքների թիվն ու վարձակալված հողերի մակերեսը գերազանցեցին նախաճգնաժամային 2007 թվականի ցուցանիշները: Վերջինը **հասավ աննախադեպ 358 հեկտարի՝** գրեթե տասն անգամ ավելի, քան 2002 թվականին:

2009 թվականին Տավուշի մարզի համայնքներում հողերի աճուրդային վաճառքի արդյունքում հողամասերն իրացվել են մեկնարկային նվազագույն գնից **ավելի քան երկուսուկես անգամ բարձր**, իսկ 2010 թվականին՝ ավելի քան **քառապատիկ** գնով: 2010 թվականի ընթացքում մարզի տարածքում պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության հողերի վարձակալության վճարը մեկ հեկտարի հաշվով գրեթե **կրկնապատկվել է**:

2010-2011 թվականներին Հաղարծին և Վազաշեն գյուղերի սողանքային գոտիներից տարահանված վեց ընտանիքներ **անհատույց ստացել են պետական**

Տավուշի մարզում 2010 թվականին աշխատողների միջին ամսական անվանական աշխատավարձը 1998 թվականի համեմատ ավելացել է գրեթե ինն անգամ, 2001 թվականի համեմատ՝ հնգապատիկ, իսկ 2005 թվականի համեմատ կրկնապատկվել է:



Ֆինանսական աջակցություն և գնել են բնակարան, իսկ Բագրատաշեն, Իջևան և Աչաջուր համայնքներում անօթևան մնացած բնակիչներն ապահովվել են բնակարանով:

2007-2011 թվականներին հիմնանորոգվել են Տավուշի մարզի մի շարք քաղաքային և գյուղական համայնքների բազմաբնակարան շենքերը:

Աշխատանքը

Տավուշի մարզի արդյունաբերական կազմակերպություններում, առևտրի և սպասարկման ոլորտի ձեռնարկություններում 2011 թվականին զբաղված շուրջ 16,500 աշխատողների միջին ամսական աշխատավարձը 2010 թվականի համեմատ ավելացել է ավելի քան մեկ հինգերորդով:

2010 թվականին տավուշցիների 60 տոկոսը զբաղված էր գյուղատնտեսության, իսկ 30 տոկոսը՝ ծառայությունների ոլորտում:

Տավուշում տարեց-տարի ավելացել է ոչ պետական հատվածում զբաղվածների տեսակարար կշիռը, 2010 թվականին կազմելով շուրջ 85 տոկոս, այն պարագայում, երբ հանրապետությունում ոչ պետական հատվածում զբաղված են ընդհանուրի 81 տոկոսը, իսկ Երևանում՝ ընդամենը 68 տոկոսը:

Հմուտ տեղական կառավարման արդյունքում Տավուշի համայնքներում

Սասուն Մարությանն արդեն վեցերորդ տարին է աշխատում է Իջևանում գործող «Քարարտ» քարի վերամշակման ձեռնարկությունում: Արտադրամասում աշխատող հաստոցների աշխատանքը հսկելը նրա պարտականությունն է: Ամիսը միջինը 100-ից 120 հազար դրամ աշխատավարձ է ստանում: Ասում է. «գոհ եմ, կարևորը դռանս վրա ես իմ մի կտոր հացը վաստակում եմ»: Սասուն Մարությանի չորս զավակներից մեկն արդեն հասցրել է ամուսնանալ ու լքել հայրական օջախը, երկուսը դպրոցական են, երրորդն արդեն ավարտել է միջնակարգ կրթությունն ու չի կողմնորոշվում շարունակել, թե չշարունակել ուսումը բարձրագույն հաստատությունում:

«Էսօրվա դրությամբ աշխատանք գտնելը շատ դժվար է: «Քարարտ»-ը մեզ ուղղակի փրկում է,— ասում է Սասուն Մարությանը,— հիմա ամենակարևորը մենակ աշխատատեղը չէ: Պիտի զգաս, որ կայուն է, ոտքերիդ տակ հող կա ամուր, որ ամեն ամսվա վերջ տուն մտնելիս ուրախ սրտով աշխատավարձդ դնես սեղանին: Ես գոհ եմ: Վեց տարի անընդմեջ էս կազմակերպությունում եմ ու դա հենց էն իմ ասած կայունությունն է: Ընտանիք ենք պահում ու աչքերս դրսերը չէ, թե գնանք խոպան կամ էլ ընտանիքներս առնենք քոչենք էստեղերից»:

2010-11 թվականներին հանրային հատվածում աշխատավարձերը վճարվել են առանց ուշացումների:

Կրթություն

Եթե 1998-2007 թվականներին Տավուշի մարզում նախադպրոցական հաստատությունների թիվը նվազել է շուրջ մեկ հինգերորդով, ապա 2008 թվականից սկսած դրանց թիվն ավելանում է: Միաժամանակ, 2001 թվականից սկսած՝ Տավուշի մարզի նախադպրոցական հաստատություններում աստիճանաբար ավելացել է տեղերի քանակը՝ 2010 թվականին հաս-

Նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների թվաքանակի հարաբերական աճը 2000-2010թթ.



Նախադպրոցական հաստատությունների մանկավարժների թվաքանակը



նելով **ավելի քան երեք հազարի.** 2001 թվականի համեմատ ամենամեծ աճը հանրապետությունում՝ Կոտայքի և Գեղարքունիքի մարզերից հետո:

2010 թվականին Տավուշում գրեթե կիսով չափ ավելացել է նաև նախադպրոցական հաստատություններ հաճախող երեխաների թիվը, ինչը նույնպես էականորեն մեծ է, քան հանրապետության ութ այլ մարզերի ցուցանիշները:

2010 թվականին Տավուշի մարզի գյուղական համայնքներում գործում էր գրեթե նույնքան նախադպրոցական հաստատություն, որքան Շիրակի և Լոռու մարզերի գյուղական բնակավայրերում միասին վերցրած: Նույն թվականին Տավուշի գյուղական համայնքներում նախադպրոցական հաստատություններ հաճախում էր գրեթե նույնքան երեխա, որքան Լոռու, Արագածոտնի և Վայոց Ձորի գյուղական բնակավայրերում միասին վերցրած:

Եթե 2000-2004 թվականներին Տավուշի մարզում մանկավարժների թիվը նախադպրոցական հաստատություններում կրճատվել է շուրջ 70 տոկոսով,

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղում գործող կիրառական արվեստի ֆակուլտետը՝ միակը հանրապետությունում



2010 թվականին Տավուշում մեկ նախադպրոցական հաստատություն հաճախում են երկու երրորդով ավելի շատ երեխա, քան 2000 թվականին:

ապա հետագա տարիներին մանկավարժների թիվը հետևողականորեն աճել է: 2010 թվականին Տավուշի նախադպրոցական հաստատություններում աշխատում էին մեկ քառորդով ավելի մանկավարժներ, քան 2004 թվականին:

Տավուշի մարզում **զգալիորեն նվազել են** նախադպրոցական հաստատություններում երեխաների հիվանդացության դեպքերը. 2010 թվականին հիվանդացության դեպքերի քանակը 2001 թվականի համեմատ **կրճատվել է քառակի**:

2011 թվականին Տավուշի մարզում գործում էին **մեկուկես անգամ ավելի** երաժշտական, արվեստի և գեղարվեստի դպրոցներ, քան 2001 թվականին: Նույն ժամանակահատվածում ավելի քան **մեկ քառորդով ավելացել է** դրանցում սովորողների թիվը, ընդ որում, անվճար սովորողների թիվը 2011 թվականին 2001 թվականի համեմատ գրեթե կրկնապատկվել է:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաս-

2008-2010 թվականներին Տավուշի մարզում եռապատկվել է նաև արհեստագործական ուսումնական հաստատություններում սովորողների թիվը, իսկ դրանցում դասավանդող մանկավարժների թիվն ավելացել է ավելի քան 3.6 անգամ:

տատությունների քանակը Տավուշի մարզում 2010 թվականին 2008 թվականի համեմատ եռապատկվել է: Տավուշում գործում են **նույնքան** արհեստագործական ուսումնական հաստատություններ, որքան Արարատի, Արմավիրի և Վայոց Ձորի մարզերում **միասին վերցրած**:

Եթե մինչև 2010 թվականը արհեստագործական ուսումնական հաստա-

«Տղաս հաճախում է երաժշտական դպրոց, փողային գործիքների բաժնում է սովորում: Մեր դպրոցը վերանորոգվել է, երեխան սովորում է շատ լավ պայմաններում, աշակերտները շատ են: Որպես ծնող՝ շատ գոհ եմ:»:

Անուշ Միրզոյան, Իջևան քաղաքի բնակչուհի

Բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորող ուսանողների քանակի հարաբերական փոփոխությունը 2002-2010թթ.



տություններ տավուշցիներն ընդունվում էին բացառապես անվճար՝ պետական

Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղը

պատվերի շրջանակներում, ապա 2010 թվականին ընդունված հինգ ուսանողից մեկն ուսանում է՝ վճարելով սեփական կրթության համար:

2010 թվականին Տավուշի մարզի բարձրագույն ուսումնական հաստատություններ ընդունվածների թվաքանակը 2002 թվականի համեմատ մեկուկես անգամ ավելացել է, ընդ որում, 2010 թվականին ընդունված ուսանողների 90 տոկոսը պատրաստ է հոգալ իր կրթության ծախսերը:

2011 թվականին Տավուշի բարձրագույն ուսումնական հաստատություններում սովորում էին շուրջ **երկու հազար ուսանողներ՝ հինգ անգամ ավելի**, քան 2003 թվականին. գրեթե նույնքան, որքան 2003 թվականին Արարատի, Արագածոտնի, Վայոց Ձորի, Արմավիրի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում միասին վերցրած:

2010 թվականին Տավուշի մարզում բարձրագույն ուսումնական հաստատություններում դասավանդում էին **ավելի շատ դասախոսներ**, քան Վայոց Ձորի, Արմավիրի և Կոտայքի մարզերում միասին վերցրած:

2007-2011 թվականներին Տավուշի մարզի շուրջ երեսուն քաղաքային և գյուղական համայնքներում ավելի քան հիսուն նախադպրոցական, հանրակրթական, արտադպրոցական և մասնագիտական կրթական հաստատությունների կառուցմանը, հիմնանորոգմանը, վերանորոգմանն ու նախագծմանը հատկացվել է **գրեթե հինգ միլիարդ դրամ**:

2008 թվականին Տավուշի մարզի Մովսես համայնքում բացվել է նոր ընդարձակ ու կահավորված մանկապարտեզ նախատեսված 50 երեխայի համար:

1992-1994 թվականների ինքնապաշտպանական մարտերի ընթացքում հայ զինվորներին որպես ապաստան ծառայած Սևքարի մանկապարտեզը 2010 թվականին վերանորոգվել է:1**00 մանուկ** այժմ հայրերի ու մայրերի արյամբ պաշտպանված հողի վրա կրթվելու հնարավորություն ունի:

2007-2011 թվականներին վերանորոգվել են **Իջևանի** և **Դիլիջանի** մի քանի մանկապարտեզներ, հիմնանորոգվել **Այգեհովիտ, Կոթի, Աչաջուր, Բաղա-**

«Այն հույսը, որ կունենանք վերանորոգված դպրոց՝ մեզ զինում էր համբերությամբ, սպասելիքով ու հավատով: Մեր հույսը, փառք Աստծո, արդարացավ»:

Սուսաննա Սարգսյան, թիվ 6 հիմնական դպրոցի տնօրեն

նիս, Խաշթառակ, Պտղավան, Վարագավան, Հաղթանակ, Կողբ, Լճկաձոր, Դեղձավան, Չինչին, Բերքաբեր, Գետահովիտ, Սևքար, Չորաթան, Աղավնավանք, Գանձաքար, Ծաղկավան, Հաղարծին և Բերդավան համայնքների հանրակրթական դպրոցները: Դրանցից շատերում վերանորոգվել են մարզադահլիճները, **Կողբի** միջնակարգ դպրոցում կառուցվել է ջեռուցման համակարգ, **Պառավաքարում** կառուցվում է դպրոցի երկրորդ մասնաշենքը: Հանրակրթական դպրոցներ են վերանորոգվել նաև մարզի քաղաքային համայնքներում:

2009 թվականին վերաբացվել է **Խաշթառակ** համայնքի դպրոցը: Հիմնանորոգվել են 3 մասնաշենքերը, մարզադահլիճը, ճաշարանն ու հանդիսությունների սրահը, դպրոցը համալրվել է կահույքով և լաբորատոր գույքով, բացվել է համակարգչային դասասենյակ, բարեկարգվել՝ դպրոցի հարակից տարածքը:

2010 թվականին **Բերդում** կառուցվել է երաժշտական դպրոցի նոր շենքը և վերանորոգվել արհեստագործական դպրոցը, 2011 թվականին՝ վերանորոգվել է **Այրում** քաղաքի երաժշտական դպրոցը, կառուցվել է ԵՊՀ **Իջևանի** մասնաճյուղի մարզադահլիճը, հիմնանորոգվել Իջևանի պետական քոլեջը:

ՀՀ կառավարության ջանքերով Տավուշի քաղաքային և գյուղական հանրակրթական դպրոցները կահավորվել են, հագեցվել գույքով, համակարգիչներով, ֆիզիկայի, քիմիայի, անատոմիայի լաբորատոր պարագաներով: Միայն 2008 թվականին Տավուշի մարզի դպրոցների համար գույքի ձեռքբերման նպատակով հատկացվել է **ավելի քան 62 միլիոն դրամ**:

Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներին 2008-2011 թվականներին մատուցվել են շուրջ **հինգ միլիոն դրամ** ծավալով տրանսպորտային ծառայություններ:

2011 թվականին համակարգչային դասարաններով ապահովված դպրոցների թիվը մարզում գրեթե կրկնապատկվել է՝ հասնելով 73-ի:

Երևանի պետական համալսարանի
Իջևանի մասնաճյուղի մարզադահլիճը

Աննախադեպ տեմպով ընթացել է Տավուշի մարզի դպրոցների վերազինումը: 2010 թվականին համակարգչային դասարան ուներ Տավուշի մարզի 38 հանրակրթական դպրոց՝ **երկու անգամ ավելի**, քան նախորդ տարում: Տավուշի հանրակրթական դպրոցներից 46-ը, ինչպես նաև **Բերդի** արհեստագործական ուսումնարանը արդեն ապահովված են անխափան ինտերնետ կապով: Մարզի 37 դպրոցներ ապահովվել են **ուսումնական զենքով**:

Տավուշի մարզում ներդրվել է **ներառական կրթության մոդելը**. առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները սովորում են հանրակրթական դպրոցներում:

«Փարոս» հասարակական կազմակերպության մշտադիտարկման արդյունքները ցույց են տվել, որ, ի տարբերություն Հայաստանի մյուս համայնքների, միայն Տավուշի մարզում է, որ ուսումնական հաստատություններն ունեն թեքահարթակներ, ինչը մարզում ներառական կրթության ներդրման արդյունք է: Հատկանշական է, որ ընտրական տեղամասերը Հայաստանում շատ հաճախ տեղակայված են հենց ուսումնական հաստատություններում և

«Մեր երեխաներն ամբողջ Հայաստանով մեկ մեր պատասխանատվությունն են. նրանք երբևէ չպետք է անտեսվեն: Այսօր նրանց անտեսել՝ նույնն է, թե թուլացնել մեր ապագայի հիմնասյուները... պետք է ամեն ինչ անենք, որ այս սահմանամերձ գյուղը գոյատևի, որ գյուղացին մնա և աշխատի այս հողի վրա: Մանկապարտեզն այդ երկար ճանապարհի մի քայլն է միայն»:

Ռալֆ Յիրիկյան, ՎիվաՍել-ՄՏՍ-ի Գլխավոր տնօրեն:

«Տավուշի օրինակով Հայաստանը պատրաստ է համընդհանուր ներառական կրթության անցնել: Նման մոտեցումը կրթական այս նուրբ համակարգին հեռավոր Բերդում մեզ ուղղակի ապշեցրեց: Այն հինգ հաստիքները՝ հոգեբան, լոգոպեդ, սոցմանկավարժ և հատուկ մանկավարժ, որ թիվ 3 հիմնական դպրոցին տրվում են հիմնական ֆինանսավորմամբ ու որոնք սահմանել է կառավարությունը, որևէ անհամապատասխանություն դրա կոնտեքստում ես չտեսա... Մարզում դպրոցների ուսուցչական կազմերի հետ հանդիպելուց հետո, կարող եմ ասել, որ նրանց աշխարհայացքը ու մոտեցումներն առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաների հանդեպ լիովին տարբերվում են նրանից, ինչ ես տեսել եմ Երևանում… դրան դեռ ունենք գալու»:

Անահիտ Բախշյան, ՀՀ Ազգային Ժողովի պատգամավոր

թեքահարթակների առկայությունը ապահովում է նաև հաշմանդամ ՀՀ քաղաքացիների մասնակցությունը երկրում և համայնքում իշխանության ձևավորմանը: 2011թ. դրությամբ Հայաստանի ընտրական տեղամասերի 85 տոկոսն անմատչելի է հաշմանդամների համար, որոնց մեծ մասը, թեպետ ունի ընտրական իրավունք, բայց հավասար պայմանների բացակայության պատճառով չի մասնակցում ընտրական գործընթացներին, մինչդեռ Տավուշի մարզը **երկրում միակն է**, ուր այս խնդիրը գրեթե լիարժեքորեն լուծված է:

Տավուշի մարզի ավագ դպրոցների և Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի միջև կնքվել է համագործակցության պայմանագիր, իրականացվում են փոխադարձ այցելություններ, ինչը նպաստում է աշակերտների մասնագիտական կողմնորոշմանը:

2010-2011 թվականներին հանրակրթությունից դուրս մնացած ավելի քան

2010 թվականին իրավախախտման հակում ունեցող երեխաների թիվը Տավուշում նվազել է ավելի քան կիսով չափ:

Հայազգի Ռուսաստանցի գործարար Ռուբեն Վարդանյանը Դիլիջանի միջազգային դպրոցի կառուցման ներդրումային ծրագրի նախաձեռնողներից և ֆինանսավորողներից է

քսան երեխաների հետ անմիջական աշխատանքների արդյունքում նրանք վերադարձել են հանրակրթություն:

2010-2011 թվականներին մարզի **240 անապահով ընտանիքների երեխաներ** ամառային հանգիստը անցկացրել են Հանքավանի «Լուսաբաց» ճամբարում:

Գերմանիայի մեծահասակների դպրոցների միության հայաստանյան մասնաճյուղի հետ համագործակցությամբ **Իջևան** քաղաքում կառուցվում է մեծահասակների կրթության դպրոց, որը մեծ նշանակություն կունենա աշխատանք փնտրողների վերապատրաստման գործում:

2011թ մեկնարկել է **Դիլիջանի միջազգային դպրոցի կառուցման ներդրումային ավելի քան 80 միլիոն ԱՄՆ դոլար ծավալով ծրագիրը**, որն ԱՊՀ տարածքում **նախադեպը չունի**: Հայաստանում և ԱՊՀ-ում առաջին ամենաբարձր մակարդակի միջազգային դպրոցում տասներեք-տասնհինգ տարեկան աղջիկ-

Տիգրան Օքմինյանին մինչեւ 2010թ-ի սեպտեմբերը ճանաչում էին միայն իրենց թաղում ու Իջեւանի թիվ 3 հիմնական դպրոցում, որտեղ նա սովորում էր: Արտառոց ոչ մի բան: Սովորական մի պատանի, որ իր հասակակից հազարավոր, միլիոնավոր տղաների նման այս աշխարում ամենից շատը սիրում է ֆուտբոլ խաղալ բակում, երկրպագել «Ռեալ Մադրիդ» ֆուտբոլային թիմին ու ֆուտբոլիստ Քրիստիանու Ռոնալդուին: Ըստ Վարսենիկ տատի՝ թոռը ռոմանտիկ տղա է, քչախոս: Բնավորութայն այս գիծը մանկավարժ տատը թերություն է համարում, սակայն որպես առավելություն շեշտում է Տիգրանի գրավոր խոսքը: Դե իհարկե, եթե տղան շնորհալի չլիներ, չէր հաղթի Սփյուռքի նախարարության կողմից հայտարարված «Մեր լեզուն, մեր հայրենիքն է» խորագրով շարադրության հանրապետական մրցույթում եւ չէր գրավի 3-րդ պատվավոր տեղը: «Թոռնիկս ուժեղ է հումանիտար առարկաներից, գրականություն շատ է սիրում: Երբ իմացա, որ էդպիսի մրցույթ է հայտարարված, խորհուրդ տվեցի մասնակցել: Դե արդյունքն ինքներդ էլ եք տեսնում»,– գոհունակ ժպտում է Վարսենիկ տատը:

Չնայած հումանիտար առարկաների նկատմամբ տածած սիրուն, 2011 թվականից Տիգրանը սովորում է Իջեւանի թիվ 2 ավագ դպրոցի բնագիտական հոսքում: Ցանկանում է տնտեսագետ դառնալ, թեպետ, կրկին Վարսենիկ տատի համոզմամբ, թոռը լավ իրավաբան կդառնա, եթե ցանկանա: Տիգրանը տատի տեսակետները չի վիճարկում: Ամեն դեպքում, ըստ իրեն, կարեւորը կրթված մարդ դառնալն ու հայրենիքին պիտանի լինելն է:

ներն ու պատանիները կկարողանան ստանալ համակողմանի ու ներդաշնակ առաջնակարգ կրթություն:

Սահմանամերձ Տավուշի մարզի կրթական հաստատությունների սովորողներն ու մանկավարժները լավ գիտակցում են, որ հայ ժողովրդի հարատևման խորհուրդը ոչ միայն զենքի, այլև մտքի ու ոգու զորությունն է: Տավուշում բազում են տաղանդաշատ երեխաներն ու երիտասարդները:

Դպրոցականների առարկայական օլիմպիադաների հանրապետական փուլին մարզից մասնակցել է **67 աշակերտ**: Տավուշի մարզի սաները լավագույնն էին 2010 թվականին հանրապետության ավագ դպրոցներում «Հայոց լեզու և հայ գրականություն» և «Մաթեմատիկա» առարկաների գնահատման արդյունքներով:

Պատահական չէ, որ ասմունքի հանրապետական 4-րդ փառատոնի եզրափակիչ փուլն անցկացվել է հենց Տավուշի մարզում, որտեղ տավուշցի երիտասարդն արժանացել է մրցանակի: 2011 թվականին Դիլիջանի Հ. Շարամբեյանի անվան գեղարվեստի դպրոցի սաների աշխատանքները Չեխիայի Լիդիցե քաղաքում անցկացվող «Սա ես եմ, այստեղ եմ ես ապրում» միջազգային ցուցահանդես-մրցույթում արժանացել են մեդալի, մրցանակների ու դիպլոմների: Տավուշցի **Տիգրան Օքմինյանը** «Մեր լեզուն մեր հայրենիքն է» խորագրով շարադրությունների մրցույթում դարձել է մրցանակակիր:

Առողջապահություն

ՀՀ կառավարությունը վերջին տարիներին մեծ ուշադրություն է դարձրել հայաստանցիների առողջության պահպանման առաջնային օղակի զարգացմանը: Տավուշի մարզում 2007-2009 թվականներին՝ երեք տարում, **մեկ հինգերորդով ավելացել են** ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատությունների թիվը՝ դրանց թիվը 22-ից հասցվել է **27-ի**: 10,000 տավուշցիների 2010 թվականին սպասարկում էին **25 տոկոսով ավելի շատ** ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներ, քան 2007 թվականին:

2004 թվականից աստիճանականորեն ավելացել է ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատություններ տավուշցիների հաճախումների քանակը, իսկ 2007 թվականից այն շեշտակիորեն բարձրացել է՝ **շուրջ 30 տոկոսով**: 2010 թվականին ամբուլատոր-պոլիկլինիկական հիմնարկներում հաճախումների քանակը մեկ տավուշցու հաշվով 2007 թվականի համեմատ **ավելացել է մեկ երրորդով** ինչը վկայում է պոլիկլինիկաների անհրաժեշտության, առողջության խնդիրների վերաբերյալ տավուշցիների իրազեկության բարձրացման, ամբուլատոր ծառայությունների հասանելիության, մատչելիության բարձրացման և սեփական առողջության հանդեպ տավուշցիների հոգածության մեծացման մասին:

2007-2011 թվականներին Տավուշի մարզում շոշափելի ներդրումներ են կատարվել առողջապահական հաստատությունների կառուցման և վերանորոգման ուղղությամբ:

«Բերդի բժշկական կենտրոնը սպասարկում է շուրջ 32 հազար 600 բնակչի: Հիվանդանոցում գործում է թերապեւտիկ, մանկական, մանկաբարձագինեկոլոգիական, վիրաբուժական եւ ինֆեկցիոն բաժինները 60 մահճակալով: 2011թ-ին կենտրոնը վերազինվել է: Շտաբուժօգնությունը ստացել է վերջին սերնդի ռեմոբիլ, որ հատկապես խիստ անհրաժեշտություն էր հեռավոր գյուղերից հիվանդների տեղափոխման առումով: Նեղ մասնագետների կարիք ունի հիվանդանոցը, հույս ունենք, որ այս խնդիրն էլ հետագայում կլուծվի»:

Արամ Հարությունյան, Բերդի բժշկական կենտրոնի տնօրեն

2010թ. Իջևանում վերաբացվել է ժամանակակից սարքավորումներով հագեցած բժշկական կենտրոնը՝ Երևանի «Էրեբունի» և «Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոնների հետ **հեռահաղորդակցման 24-ժամյա կապով**, որի միջոցով Կենտրոնի բժիշկները կարող են քննարկել առավել կարևոր հարցերը: Կենտրոնում աշխատում է 24 բժիշկ, 33 միջին բուժաշխատող, 6 վարչական և 18 այլ աշխատող, Երևանից գործուղվում են լավագույն բժիշկներ: Կենտրոնն ի զորու է հոգալ Տավուշի մարզի և Հայաստանի հյուսիս-արևելյան տարածաշրջանի բնակչության առողջական խնդիրները:

2010թ. հիմնանորոգվել և արդի սարքավորումներով կահավորվել է Նոյեմբերյանի քաղաքային հիվանդանոցը, որը **բացառիկ կարևորություն** ունի մարզի համար և սպասարկում է ավելի քան 30 հազար բնակչի: Գործում են հիմնանորոգված պոլիկլինիկայի ֆիզիոթերապևտիկ սրահը, ատամնաբուժարանը, թերապևտիկ, վերակենդանացման, վիրաբուժական, մանկաբարձական, գինեկոլոգիայի, ինֆեկցիոն և ախտորոշիչ բաժանմունքները: Հիվանդանոցը կարող է միաժամանակ որակյալ բուժծառայություններ մատուցել **60 անձի**:

2009թ. Իջևանում բացվել է **«Երեխաների զարգացման և վերականգնողական կենտրոնը»**՝ «Արաբկիր» բժշկական համալիրի՝ Երեխաների և դեռահասների առողջության ինստիտուտի մասնաճյուղը, որը զբաղվում է զարգացման տարբեր հապաղումներ ունեցող երեխաների մասնագիտական խնամքով:

2011 թվականին մարզի 4 բժշկական կենտրոններում ստեղծվել են շտապ

Իջևանի վերաբացված բժշկական կենտրոնում

«Երբ առաջին անգամ եղա հիվանդանոցում, սարսափելի վիճակ էր: Գերմանիա վերադառնալուն պես իմ գործընկերների հետ որոշեցինք միջոցներ գտնել և վերանորոգել հիվանդանոցը: Այսպիսով, ձեռք ձեռքի տալով մեզ հաջողվեց հավաքել այդ հսկայական գումարը»:

Ժիլբեր Մոմջյան, «Հայաստան» համահայկական հիմնադրամի Գերմանիայի տեղական մարմնի ատենապետ

«Շատ տպավորված եմ՝ տեսնելով հիվանդանոցի ավարտուն տեսքը... Մաղթում եմ, որ այն երկար ծառայի մեր հայրենակիցներին և գործածվի միայն ծնունդների համար: Այստեղ ծնված մեր գառնուկները թող, որ ապագայում դառնան առյուծներ և պաշտպանեն մեր սահմանները»:

Ավետիս Կիզիրյան, «Հայաստան» համահայկական հիմնադրամի Շվեյցարիայի տեղական մարմնի ատենապետ

բժշկական օգնության համակազմեր, բուժանձնակազմը անցել է համապատասխան վերապատրաստում:

Դիլիջան քաղաքում վերանորոգվել է բժշկական կենտրոնը, կենտրոնի նոր մասնաշենքում կառուցվել է ջեռուցման համակարգ: Խաշթառակ և Ազատամուտ համայնքներում կառուցվել են առողջության առաջնային պահպանման ամբուլատոր-պոլիկլինիկական կենտրոններ: Արդիականացվում է Բերդի հիվանդանոցը:

2011 թվականին Նոյեմբերյանի բժշկական կենտրոնը հագեցվեց դիալիզի սարքավորմամբ, ինչի արդյունքում խիստ կարևոր և առանձնահատուկ այս ծառայությունը տավուշցիները կարող են ստանալ մարզում: 2008-2011 թվականներին մարզի մի շարք առողջության կենտրոնների տրամադրվել են շտապ օգնության շարժակազմեր:

Մարզում պետական պատվերի շրջանակներում հիվանդանոցային բուժօգնություն են ստացել **6,727** հիվանդներ: 2010թ. մարզի ծննդատներում ծնվել է **1,610** երեխա, իսկ բուժհաստատություններին հատկացվել են ծննդօգնության շուրջ **1,770** հավաստագրեր: Վերականգնողական և առողջարանային բուժում են ստացել 2-րդ և 3-րդ խմբի շուրջ **150** հաշմանդամներ: Առողջապահական հաստատությունների վերանորոգման ու վերազինման, անձնակազմի վերապատրաստման ու նոր երիտասարդ կադրերով համալրման արդյունքում մարզի բուժհաստատություններում կտրուկ ավելացել են մուտքերը վճարովի ծառայություններից՝ 2011 թվականին ընդհուպ մոտենալով գրեթե հարյուր միլիոն դրամ սահմանագծին՝ 2010 թվականի համեմատ մեկ հինգերորդով ավելի:

Սահմանամերձ Սևքար գյուղի բնակիչ Խաչատուր Բաղդասարյանը սևքարեցի հայդուկ Սաքոյի հետնորդը չէ ուղիղ գծով, բայց դա ամենևին էլ չի խանգարում նրա համագյուղացիներին նույնչափ մեծարանքով խոսել քսանամյա երիտասարդի մասին: Տղան Լեռնային Ղարաբաղի հանրապետությունում ծառայելիս սահմանն է պահել, կանխել թշնամու ներխուժումը, փրկել ծառայակից ընկերներին վարձկան մարդասպանի գնդակից: Միթե դա քիչ է, որպեսզի համերկրացիները նրան վերաբերվեն ջերմորեն ու պատկառանքով: Իսկ Խաչատուրի կարծիքով, ինքն ընդամենը պարտքն է կատարել հայրենիքի հանդեպ, և ով էլ լիներ իր փոխարեն՝ նույն կերպ կվարվեր:

Սակայն արդեն զրույցի ընթացքում հասկանում ես, որ Խաչատուրի «ով էլ որ լիներ» արտահայտությունն այնքան էլ տեղին չէ: Մեկ տարի առաջ տեղի ունեցածի մասին սևքարեցի երիտասարդը դժվարությամբ է խոսում՝ մի փոքր էլ ամաչելով: Պատմում է, որ աշնանային այդ օրն ինքն ու ընկերը դիրքերում գտնվող պահակակետում են եղել: Մթության մեջ, նախ, իրենց մոտեցող բարձրահասակ մեկի սիլուետն են տեսել, ով հետո՝ գոռալով հարձակվել է ընկերոջ վրա: Հասկացել են, որ թշնամու զինվոր է, վարձկան մարդասպան: Վերջինս չի նկատել ընդամենը տասը մետր այն կողմ գտնվող երկրորդ հայ զինվորին: Հենց այս հանգամանքն էլ օգնել է Խաչատուրին, նախ, թինկունքից հարձակվել թշնամու վրա ու գետին գլորելուց հետո՝ գնդակահարել:

Ասում է, որ այդ վայրկյաններին ոչ մի բանի մասին չի մտածել, ոչինչ չի զգացել, միտքն ուղղված է եղել միայն թշնամուն վնասազերծելու ուղղությամբ: «Հասկանում էի, որ եթե չհարձակվեմ, նախ ընկերոջս է սպանելու, հետո ինձ ու ներքևում՝ խրամատների մեջ քնած մեր հինգ ընկերներին,– ասում է Խաչատուրը,– վարձկանի հետ սահմանն անցած ու մեր մարտական դիրքեր ներխուժած էլի զինվորներ կային: Նահանջելու ժամանակ նրանցից երկուսը տրաքեցին միների վրա: Էս ա եղել ամբողջ պատմությունը»:

Իր հերոսական արարքի համար սևքարեցի Խաչատուր Բաղդասարյանը պարգևատրվել է ԼՂՀ նախագահի կողմից «Արիության» մեդալով, ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանի կողմից՝ «Արիության» մեդալով, «Հայոց արծիվներ» ՀԿ-ի կողմից՝ «Լեռնահայաստանի արծիվ» հուշամեդալով, Սևքար համայնքի ղեկավարի կողմից՝ «Սևքարեցի Սաքո» մեդալով:

Խաչատուր Բաղդասարյանն իր ընտանիքի հետ

Մշակույթ և սպորտ

Տավուշի մարզը հայոց պատմամշակութային ժառանգության թանգարան է բաց երկնքի տակ: Մարզի տարածքում 340-ից ավելի պատմամշակութային արժեք-կառույցներ կան, որից **22-ը եկեղեցիներ են**:

2007-2011 թվականներին կառուցվել և վերանորոգվել են մշակութային ու մարզական հաստատություններ և եկեղեցիներ:

2011 թվականին **վերակառուցվել է Հաղարծինի վանական համալիրը**, վերականգնվել է համալիր տանող ճանապարհը, վերակառուցվել են ենթակառուցվածքները, նորոգվել է վանական համալիրը, կառուցվել է քահանայատուն, բարեկարգվել եկեղեցու հարակից տարածքը:

2011 թվականին Մովսես համայնքում օծվել է **«Սուրբ Աստվածածին»** եկեղեցին, իսկ Բարեկամավան համայնքում կատարվեց **«Սուրբ Գրիգոր լուսավորիչ»** մատուռի օծումը: Նոյեմբերյան քաղաքում օծվել է **«Սուրբ Աննա»** եկեղեցին: Վերանորոգվել, հարդարվել և կանաչապատվել են **Մակարավանքը**, **Գանձաքարի**, **Սարիգյուղի**, **Այգեհովիտի** և այլ եկեղեցիներ ու մատուռներ: 2011 թվականից **Ծաղկավանում**, **Կողբում** ընթացքի մեջ են մատուռների կառուցման աշխատանքները:



Մակարավանքը



Մովսես համայնքի Սուրբ Մարիամ Աստվածածին նորակառույց եկեղեցին

2010-2011 թվականներին հիմնանորոգվել է **Իջևանի երաժշտական դպրոցը**. երկհարկանի շենքին ավելացվել է ևս մեկ հարկ: Երեք հարյուր քսան աշակերտի համար նախատեսված երաժշտական դպրոցում սովորում է **325 աշակերտ** Իջևանից և հարակից համայնքներից, որոնցից. 25-ը՝ մանկատան սաներ են: Կառուցվել է պարարվեստի դպրոցի նոր մասնաշենքը:

«Մեր նորակառույց թանգարանը զարմացնում է ոչ միայն դիլիջանցիներին, այլև հանրապետության բոլոր կողմերից մեզ այցելողներին, զբոսաշրջիկներին, որովհետև մեզ մոտ ներկայացված են Վերածննդից մինչև սոցռեալիզմի նկարիչների գործերը»:

Գայանե Քոչարյան, Դիլիջանի երկրագիտական թանգարան-պատկերասրահի ֆոնդապահ

«Ուրախալի է, որ մեզ արդեն ճանաչում են զբոսաշրջիկները, արտասահմանից եկած հյուրերը և ծանոթանում են մեր արվեստին, մեր մշակույթին»:

Գայանե Մուկուչյան, Դիլիջան քաղաքի բնակչուհի

Դիլիջանում բացվել է կերպարվեստի եզակի աշխատանքներով հարուստ երկրագիտական թանգարան-պատկերասրահ: **Իջևանում** վերանորոգվել է քաղաքային պատկերասրահը:

2011 թվականից Դիլիջանի կենտրոնական գրադարանը գործում է վերանորոգված, ավելի ընդարձակ շենքում, վերանորոգվում է **Իջևանի** մարզային գրադարանը: Դիլիջանում ստեղծվում է **«Գիտելիք հանուն զարգացման»** կենտրոն՝ տեխնիկապես հագեցված և արդի տեղեկատվական տեխնոլագիաներով կառավորվող գերժամանակակից քաղաքային գրադարան:

Իջևանում կառուցվել է երիտասարդական կենտրոն: **Դիլիջանի** գեղարվեստի դպրոցում ստեղծվել է մասնագիտական գրականության գրադարան: **Արծվաբերդ, Հաղարծին, Լուսաձոր, Չինարի** համայնքներում հիմնանորոգվել, իսկ Մովսես համայնքում կառուցվել են մշակույթի տները:

Վերանորոգվել են համայնքային կենտրոններ **Խաշթառակ, Ոսկեպար,**

Բերքաբեր, Հովք, Պտղավան, Պառավաքար, Կիրանց, Նավուր, Դիտավան, Վազաշեն համայնքներում: 2010 թվականից Տավուշի մարզի Ակնաղբյուր համայնքում կառուցված համայնքային կենտրոնի երկհարկանի շենքում են տեղակայված գյուղապետարանը, բուժկետը, գրադարանն ու հանդիսությունների դահլիճը:

2007-2011 թվականներին վերանորոգվել է **Նոյեմբերյանի** մարզադաշտը, վերանորոգվել և տարբեր մարզաձևերի համար անհրաժեշտ պարագաներով և մարզասարքերով կահավորվել են **Հովքի, Ջուջևանի** և **Նոյեմբերյանի** դպրոցական մարզասրահները, բարեկարգվել են դպրոցամերձ մարզահրապարակները, ինչը սաներին հնարավորություն է ընձեռում ընդգրկվել տարբեր սպորտային խմբակներում:

2012-2013 թվականներին **Կողբում** կբացվի մանկական զբոսայգի, **Նոյեմբերյանում՝** նոր եկեղեցին, **Պառավաքար** և **Տավուշ** համայնքներում կվերանորոգվեն մշակույթի տները, **Պտղավանում** կբացվի նոր մշակույթի տուն: ՀՀ կառավարության նախաձեռնությամբ՝ մշակութային ավանդույթներով հարուստ **Իջևան** քաղաքն այլևս կունենա թատրոն:

Տավուշցին արարող է ու ստեղծագործ, և եռում է մշակութային կյանքը

Մովսես համայնքի մշակույթի տունը

Դիլիջանի նորաբաց թանգարան-պատկերասրահը

«Գյուղի կյանքում տեղ գտած բարեփոխումների շնորհիվ երիտասարդ ընտանիքներում ավելացել է նորածինների թիվը, վերջին երկու ամսվա ընթացքում հարազատ գյուղ է վերադարձել չորս ընտանիք: Շատ ուրախալի է, որ գյուղացիները ավելի լավատես են դարձել վաղվա օրվա նկատմամբ»:

Կարեն Դոլմազյան, Ակնաղբյուր համայնքի ղեկավար

Տավուշի քաղաքներում ու գյուղերում: **Դիլիջանի, Նոյեմբերյանի, Բերդի ու Կողբի** թատերախմբերը 2007-2011 թվականներին բեմադրել են բազմաթիվ պիեսներ ու դրամատիկական ստեղծագործություններ: Մարզի տիկնիկային թատերախմբերի բեմականացումներով հիացել են Տավուշի և Հայաստանի մարզերի համայնքներում, Երևանի Հովհաննես Թումանյանի տուն-թանգարանում, տիկնիկային թատրոնում: Կազմակերպվել են բազմաթիվ ցուցահանդեսներ, այդ թվում՝ գեղանկարիչներ **Սպարտակ Սարգսյան**ի (ծագումով Գետահովիտից), **Նիկոլ Աղաբաբյանի** (ծագումով Նոյեմբերյանից), **Հերմինե Սարդարյանի** բազմաոճ՝ փայտ, օճառ, կավ, գիպս աշխատանքների ցուցահանդեսները: 2010 թվականին Դիլիջանում են անցել **«Եվրոպական ժառանգության օրերը»**:

Նպատակասլաց են Կողբ համայնքի բնակիչները. **Կողբը** ճանաչվել է թե՛ **«Մշակութային լավագույն գյուղական համայնք»**, թե՛ հաղթել **«Լավագույն գյուղական մարզական համայնք»** հանրապետական մրցույթներում: **Աչաջուր** համայնքը նույնպես արժանացել է 2010 թվականի **«Լավագույն գյուղական մարզական համայնք»** մրցանակին:

Հանրապետության «Լավագույն քաղաքային մարզական համայնքի» տիտղոսը նվաճել է **Նոյեմբերյան** քաղաքը: Լավագույն ազգային նվագարանների խումբ ճանաչվել է Իջևան քաղաքի ժողովրդական գործիքների համույթը: 2010 թվականին երիտասարդ տավուշցիները ոսկե մեդալ են վաստակել **«Դելֆյան խաղերում»**:

2011թ. համահայկական խաղերում փետրագնդակի առաջնությունում ոսկե մեդալի է արժանացել տավուշցի **Վարդիթեր Պողոսյանը**, իսկ միջազգային վարպետի նորման լրացրած և նախկինում Ռուսաստանը ներկայացնող տասնութամյա տաղանդաշատ շախմատիստ **Նիկիտա Մատինյանը** տեղափոխվել է Տավուշ:

Վարդիթեր Պողոսյան՝ միջազգային կարգի սպորտի վարպետ, Երևանի պետական համալսարանի Իջևանի մասնաճյուղի դասախոս: Երկու զավակի և երեք թոռնիկի տատիկ է 52-ամյա Վարդիթերը: Տասնչորս տարեկանից զբաղվել է փետրագնդակով: Առաջին հաջողությունը գրանցել է 1976 թվականին, փետրագնդակի Հայաստանի առաջնությունում՝ գրավելով առաջին տեղը: 1980 թվականին արդեն ԽՍՀՄ չեմպիոն էր, մեկ տարի անց՝ Եվրոպայի առաջնության հաղթող: 1981 թվականին մասնակցել է փետրագնդակի Ուիմբլդոնի մրցաշարին, որտեղ, հաջողության չի հասել, սակայն մրցաշարին մասնակցությունը Վարդիթերը շատ է կարևորում: Այնուհետև հաղթել է Ֆրանսիայում անցկացված փետրագնդակի բաց առաջնությունում:

Համահայկական խաղերին մասնակցությունը նոր էջ բացեց ծնունդով երևանցի, սակայն ճակատագրի բերումով արդեն 29 տարի Իջևանում հաստատված կնոջ սպորտային կյանքում: «Երրորդ Համահայկական խաղերում զուգախաղում մասնակցեցի Ռուզաննա Հակոբյանի հետ և գրավեցինք առաջին տեղը, ոսկե մեդալ բերեցինք,– պատմում է Վարդիթեր Պողոսյանը,– մեր սպորտաձևում ինչպես և մնացած բոլորում, կա տարիքային սահմանափակում, սակայն համահայկական խաղերին մասնակցելու համար էդպիսի նախապայման, թե տարիքդ մեծ է, չկա: Դա կարծում եմ ամենակարևորն է, որովհետև մեր ֆեդերացիայի նախագահ, բուլղարացի 70-ամյա Բյուզանդ Ղազարյանը նույնպես կարողացավ մասնակցել այդ խաղերին: Մարդիկ, ովքեր դեռ ակտիվորեն զբաղվում են որևէ սպորտաձևով, համահայկական խաղերին մասնակցելով մեծ տարիքում, կարծես մի նոր եռանդ, մի նոր ուժ են ստանում իրենց հետագա գործունեության համար»:

Վարդիթերը չի թաքցնում, որ օտար երկրներում մշտապես բնակվելու հնարավորություն ինքն ունեցել է, սակայն երբեք չի համակերպվել այդ մտքի հետ: Նման հնարավորություն ունեցել է թե՛ ԽՍՀՄ-ի ժամանակ, թե՛ նրա փլուզումից հետո՝ Հայաստանի անկախացման տարիներին:

«Միջազգային մրցաշարերից վերադառնալիս, երբ ինքնաթիռը սկսում էր պտտվել օդանավակայանի վրա, միշտ լաց էի լինում հուզմունքից: Հասկանում էի, որ չեմ կարող առանց իմ Երևանի, առանց իմ Իջևանի: Տարիներ շարունակ այդպես է եղել: Էն դժվար տարիներին էլ հեռանալու մասին չեմ մտածել: Հիմա էլ, եթե առաջարկեն տեղափոխվել, կմերժեմ: Ես Հայաստանից դուրս կյանքը չեմ պատկերացնում»,– ասում է Վարդիթեր Պողոսյանը:

Սոցիալական վիճակը

Տավուշի մարզում տարեց-տարի կրճատվել է աղքատության մակարդակը: Եթե 2001 թվականին աղքատ էին մարզի բնակչության շուրջ 60 տոկոսը, իսկ աղքատության մակարդակը մարզում ամենածանրն էր Հայաստանում՝ Գեղարքունիքից ու Արագածոտնից հետո, ապա 2010 թվակա-

Տավուշի մարզում աղքատության մակարդակը Հայաստանում ամենացածրն է:

Աղքատության մակարդակի փոփոխությունը 2001-2010թթ.



նին՝ անգամ ճգնաժամից հետո, Տավուշի մարզում աղքատության մակարդակը Հայաստանում ամենացածրն է, ինչը թերևս արդյունք է մարզում գյուղական բնակչության գերակշռության:

Ներկայում աղքատության մակարդակը Տավուշում ավելի ցածր է քան հանրապետության բոլոր մարզերում, նաև՝ մայրաքաղաք Երևանում: Աղքատութ-

2010 թվականին աղքատության մակարդակը Տավուշի մարզում 2001 թվականի համեմատ կրճատվել է ավելի քան կիսով չափ՝ ավելի քան հանրապետության որևէ այլ մարզում:

Շատ աղքատ բնակչության մասնաբաժնի փոփոխությունը 2004-2010թթ.



յան մակարդակը Տավուշում հանրապետական **միջինից ցածր է գրեթե մեկ երրորդով**: Եթե ֆինանսա-տնտեսական ճգնաժամին նախորդած 2007 թվականին աղքատության մակարդակը Տավուշում իջել էր մինչև 21.6 տոկոսը, ապա 2008-2009 թվականներին յուրաքանչյուր տասներորդ տավուշցի հայտնվեց աղքատության մեջ: Հետագա տարիներին աղքատության մակարդակը մարզում կրճատվեց. արդեն մեկ տարի անց՝ 2010 թվականին տավուշցիների հինգ տոկոսը հաղթահարեց աղքատության գիծը:

Տավուշում շատ աղքատների տեսակարար կշիռը նույնպես հանրապետությունում ամենացածրն է՝ 1.2 տոկոս:

Շատ աղքատների տեսակարար կշիռը Տավուշի մարզում 2005 թվականի համեմատ կրճատվել է **եռապատիկ** և ավելի ցածր է, քան ճգնաժամին նախորդող տարիներին:

Կենսաթոշակառուների թվաքանակը 1000 բնակչի հաշվով հանրապետությունում ամենաբարձրը վերջին տասնամյակում շարունակաբար եղել ու մնում է Տավուշի մարզում: Հստակ ընկալելով, որ Տավուշում կարևորագույն խնդիրներից մեկը երիտասարդների համար ապրելու և ստեղծագործելու գրավիչ պայմանների ձևավորումն է՝ մարզի աստիճանական երիտասարդացումն ապահովելու նպատակով, ՀՀ կառավարությունը, 2007 թվականից սկսած, համապետական և համահայկական նշանակության մի շարք կենտրոննե-

ի ստեղծումը նախաձեռնել է հենց Տավուշում: Պատահական չէ, որ միջազգային ամենաբարձր չափանիշներին համապատասխանող, Հայաստանում և տարածաշրջանում առաջին բարձրակարգ կրթական կենտրոնը, երկրի ու տարածաշրջանի համար ֆինանսա-բանկային համակարգի երիտասարդ կադրեր պատրաստող եզակի հաստատությունը կառուցում են Տավուշի մարզում: Վստահաբար կարելի է ասել, որ այդ նախաձեռնությունների արդյունքում մարզի բնակչության կառուցվածքը շոշափելիորեն կփոխվի. Տավուշը նոր ավյուն կստանա ու կերիտասարդանա:

Նպաստառու ընտանիքների քանակի հարաբերական նվազումը 2008-2010թթ. ՀՀ մարզերում



Նպաստառու ընտանիքների քանակի փոփոխությունը Տավուշի մարզում



Տավուշի մարզում աստիճանաբար նվազել է նպաստառու ընտանիքների թիվը, ընդ որում՝ հանրապետությունում ամենաբարձր տեմպերով:

2010 թվականին նպաստառու ընտանիքների թիվը Տավուշում 2000 թվականի համեմատ **կրճատվել է շուրջ երկուսուկես անգամ**, իսկ 2008-ի համեմատ՝ **ավելի քան մեկ երրորդով**, երկու պարագայում էլ՝ ամենաշատը Հայաստանում:

2008-2010 թվականներին Տավուշի մարզի գրեթե բոլոր համայնքներում նախնական մասնագիտական պատրաստվածություն չունեցող և աշխատանք փնտրող քաղաքացիների համար սանիտարական մաքրման, ոռոգման համակարգի մաքրման ու նորոգման, խմելու ջրատարների վերանորոգման ու նոր հատվածների տեղադրման, բնակավայրերի ճանապարհների խճապատման, անտառվերականգնման, ծառատնկման և համայնքային նշանակության այլ վարձատրվող հասարակական աշխատանքների 210 ծրագիր է կազմակերպվել՝ **ավելի քան 200 միլիոն դրամ** ընդհանուր ծավալով:

2011 թվականին Տավուշի մարզում, **առաջին անգամ հանրապետությունում** ներդրվեց ինտեգրված սոցիալական ծառայությունների համակարգը, որի արդյունքում պետության կողմից դրամական հատկացումները իրականացնում է մեկ մարմին, իսկ սոցիալական ծառայությունը տրամադրում են համայնքները՝ **«մեկ տանիքի տակ, մեկ ընդունարանի»** սկզբունքով: Սոցիալական ապահովության բոլոր խնդիրներով քաղաքացին դիմում է մեկ ընդունարան:

2011թ. մարզի 4 համայնքների սոցիալապես անապահով **270 ընտանիքներ** և դրանց շուրջ չորս հարյուր երեխաներ ստացել են հագուստ, սնունդ և տնտեսական աջակցություն:

2011 թվականին 375 տավուշցիների ՀՀ կառավարությունը տրամադրել է **արտոնյալ անտոկոս վարկեր**՝ ներմուծված մարդատար տրանսպորտային միջոցների մաքսային ձևակերպումներին աջակցելու նպատակով:

2007-2011 թվականներին **Դիլիջան**, **Նոյեմբերյան**, **Բերդ** և **Իջևան** քաղաքներում վերանորոգվել են ծերերի խնամքի քաղաքային կենտրոնները:

Աղքատության, հակամարտության ու տարերային աղետների, ֆինանսա-տնտեսական ճգնաժամի հետևանքների հաղթահարմանը Տավուշի մարզում մեծապես նպաստել են տարեց-տարի աճող՝

կառավարության ջանքերով իրականացված ներդրումները, երկրի Նախագահի հռչակած մարզերի համաչափ զարգացման քաղաքականությունը: Սակայն մարզի ներկա և ապագա ձեռքբերումները, թերևս, ամենից առաջ և ամենից առավել պարտական են իր հողին նվիրված տավուշցու աննկուն կամքին, լավատեսությանն ու վաղվա օրվա հանդեպ վստահությանը: Հատկանշական է, որ ավելի քան մեկուկես տասնամյակ առաջ իրականացված տնային տնտեսությունների հետազոտության ընթացքում երկրում աղքատության տարածվածության մասին տրված հարցին այդ օրերին երկրում ամենաաղքատ ու հակամարտության հետևանքներից դեռևս չվերականգնված մարզի բնակիչը, թշնամու գնդակի տակ աստծո ամեն օր իր արտը մշակող տավուշցին ավելի լավատեսական պատասխան է տվել, քան երկրի յոթ մարզերի բնակիչները, ավելի լավատեսական՝ քան երևանցին:

ՀՀ կառավարությունը նախորդ տասնամյակում հանրային ծավալուն միջոցներ և **մեծ ջանքեր է ներդրել** Տավուշի մարզի տնտեսության զարգացման համար ամուր հիմքեր ապահովելու նպատակով: Սակայն, ոչ մի ներդրում ու ջանք չի կարող հասնել իր նպատակին առանց հմուտ և արդյունավետ կառավարման: Առանց սրտացավ վերաբերմունքի ու հանրային բարիքի հանդեպ հոգածության ամենամեծ միջոցներն անգքամ կարող են վատնվել և փոշիանալ: Տավուշի մարզում ծավալուն ներդրումներն ու արդյունավետ կառավարումը, բարեբախտաբար, միատեղվել են՝ դառնալով ձեռքբերումներ ու բարեկեցություն, դառնալով դժվարությունները հաղթահարելու պատրաստ հազարավոր տավուշցիների կամքի արտահայտությունը:

Տավուշի մարզում պետական կառավարման և տեղական ինքնակառավարման համակարգերի ներդաշնակ փոխգործակցության արդյունքում մարզի համայնքների տեղական բյուջեների եկամուտները տարեց-տարի մեծացել են, իսկ կատարողական կարգապահությունը՝ բարելավվել: 2010-2011 թվականներին մարզի համայնքների բյուջեների հանրագումարը կազմել է շուրջ **21.2 միլիարդ դրամ,** իսկ կատարողականը հասել է **98 տոկոսի**, ընդ որում, 2011 թվականին 2009 թվականի համեմատ մարզի համայնքների բյուջեների հանրագումարն ավելացել է շուրջ 15 տոկոսով: 2011 թվականին **ավելի քան մեկուկես անգամ ավելացել է** պետական բյուջեից Տավուշի մարզի համայնքներին հատկացված դոտացիաների ծավալը՝ հասնելով **գրեթե մեկուկես միլիարդ դրամի:** 2011 թվականին 2010 թվականի համեմատ՝ մեկ տարում, **գրեթե 10 տոկոսով ավելացել** են նաև մարզի համայնքների սեփական եկամուտները:

Փոքրամարմին, համեստ մի անձնավորություն, ոչ այնքան բարձրահասակ, մազերի մեջ հազիվ նշմարվող սպիտակով: Դժվար է հավատալ, որ հենց Սլավիկ Բաբայանն է դիմացդ կանգնած մարդն, ումից սարսափել են ադրբեջանցիները արցախյան ազատամարտի տարիներին: Հետախույզների մասին սովորաբար չեն բարձրաձայնում: Նրանց կատարած աշխատանքի մասին շատ հաճախ պատկերացում չեն ունենում անգամ ընտանիքի անդամները: Քանի դեռ տվյալ անձը շարունակում է իր գործունեությունը, նրա կյանքը մշտապես պարուրված է գաղտնիքներով: Ու դա արվում է նրա անվտանգությունից ելնելով:

Իսկ հիմա անցել են տարիներ, արգելքներ չկան այլեւս: Բերդի տարածաշրջանի Վերին Կարմիրաղբյուր գյուղի բնակիչ Սլավիկ Բաբայանը, ի շնորհիվ համագյուղացիների, վերածվել է կենդանի լեգենդի: Նրա մասին խոսում են անթաքույց հպարտությամբ ու պարծանքով: «Դե ես իմ գործն եմ արել,— համեստորեն ժպտում է Սլավիկ Բաբայանը,— էս ամբողջ տարածքը սահմանի բերանով անգիր գիտեմ, անգամ մթովը չեմ մոլորվի: Պատերազմը որ սկսվեց, ես էլ ցանկություն հայտնեցի գնալ Ղարաբաղ, բայց Խաչատուրովն ու Ղավալյանը՝ մեր հրամանատարները չթողեցին, թե՝ դու մեզ Ծամշադինում ես պետք: Իրանք էլ գիտեին, որ ես համ տարածքը լավ գիտեմ, համ էլ իրանց հետախուզության մեջ շատ օգուտ կտամ»:

Պատերազմի տարիներին Սլավիկ Բաբայանը հրամանատարությունից բազմաթիվ հանձնարարություններ է ստացել ու հաջողությամբ կատարել: Արդեն նախկին հետախույզը պատմում է, որ ադրբեջանցիները սովորություն էին դարձրել սահմանամերձ հայկական գյուղերից խաղաղ բնակիչներին առևանգելու, որպեսզի հետո փոխանակեին իրենց ռազմագերիների հետ: Սակայն մեկ գերված հայ բնակչի դիմաց Սլավիկը 2-ին էր բերում, ու հաջորդ օրը կատարվում էր փոխանակում: Սլավիկն ասում է, որ իրենք չէին կարող թույլ տալ, որ հայ մարդը թեկուզ մեկ օր ավել մնար գերության մեջ:

«Այգեձորի գյուղապետի հայրիկին իրենց հանդամասից ադրբեջանցիները տարել էին,— հիշում է Սլավիկ Բաբայանը,— էդ վախտը՝ 1998 թվին ես օպերատիվ խմբի ռազվեդկի պետն էի: Եկան ինձ դիմեցին, թե՝ կարա՞նք հետ բերենք, ասի՝ պրոբլեմ չկա, մենակ թե սպանած չլինեն: Մի քանի հոգու վերցրեցի, սահմանն անցանք, մի 10 կիլոմետր խորացանք թշնամու հողում, որ հասնենք մինչեւ մոտակա գյուղը: Էդ գիշեր մնացինք էնտեղ: Առավոտը մի բիձա եկավ թոռների հետ, փայտ հավաքեցին ու գնացին: Էդ օրը չկարողացանք ոչ մի բան անել, ստիպված մի օր էլ մնացինք: Հաջորդ առավոտյան մի քիչ էլ մոտիկացանք գյուղի գոմերին, էդ ժամանակ երկու կին եկան: Իրանք մեզ տեսան ու փաստորեն էլ տարբերակ չունեինք՝ կամ իրանց էինք բերելու՝ կամ աղմուկ էր բարձրանալու՝ մեզ բռնեին»:

Ադրբեջանցի կանանցից մեկը, որ Սլավիկի պատմելով ծանրամամին էր, ուշաթափվել է վախից: Իրենք, օգտվելով առիթից, մյուս կնոջը հասցրել էին հայկական սահման: Հետագայում պարզվել էր, որ առևանգել են ադրբեջանցի ինչ որ մի նախարարի մորը: Հաջորդ օրը գերիների փոխանակումը բարեհաջող կատարվել է եւ Այգեձորի գյուղապետի հայրիկը ողջ առողջ վերադարձել է հայրենի գյուղ: «Եթե մենք ադրբեջանցիների պատասխանը չենք տվել, նրանք էլի են արել,— ասում է Սլավիկ Բաբայանը,— դրա համար, որ իրանք մեր հայերից մեկին տանում էին, դրա դիմաց մենք երկուս-երեքին էինք բերում»:

Արդեն 10 տարի է Սլավիկ Բաբայանն անցել է հողագործի խաղաղ աշխատանքին: Երեք զավակ ունի: Բաբայաններն 9 անձով ապրում են մեկ տանիքի տակ՝ հաշտ ու համերաշխ: Ասում են, որ կգա ժամանակ, երբ Վերին Կարմիրաղբյուրում մարդիկ իրենց զավակներին հեքիաթների փոխարեն կպատմեն հետախույզ Սլավիկ Բաբայանի սխրագործությունների մասին ու կհպարտանան, որ ապրել են նրա հետ կողք-կողքի, նրա ձեռքը սեղմել, նրա խորհուրդները լսել:

Հրաշագեղ է Տավուշի բնությունը և հսկայական է նրա ներուժը, մասնավորապես, տուրիզմի և գյուղատնտեսության զարգացման գործում: Սակայն Տավուշի բնաշխարհը պատրաստ է ծառայել միայն հմուտ և բանիմաց մարդուն: Հարուստ ու հզոր բնաշխարհը հզոր է իր բոլոր արտահայտություններում: Հորդառատ անձրևները կարող են ողողել ցանքատարածքներն ու վնասել գյուղամիջյան ճանապարհները, սողանքներն ու քարաթափումները կարող են գրեթե ամբողջությամբ փակել անգամ ամենաբարեկարգ ճանապարհն ու վնասել ջրագծերն ու գազատարները, ուժեղ կարկուտներն ու ցրտահարությունները կարող են վնասել խաղողի այգիներն ու ցանկապատերը: Եվ բնության տարերքը հաճախ դրսևորում է իր զորությունն ու, որպես փորձություն ու մարտահրավեր, հառնում իր սանձահարողի՝ տավուշցու առջև: 2011 թվականին Լճկաձորի հատվածում Վանաձոր-Բագրատաշեն ավտոճանապարհի լանջի փլուզումն իր մասշտաբներով ու հետևանքներով վերջին հարյուրամյակում Հայաստանի Հանրապետության տարածքում բացառիկ էր ու եզակի. զոհվեցին մարդիկ: Հայաստանի Հանրապետության կառավարությունը զոհվածների ընտանիքներին հատկացրեց մեկ միլիոն դրամ օգնություն, վնասված ավտոմեքենաների տերերին փոխհատուցում տրվեց:

Սակայն տավուշցին ոչ միայն չի ընկրկում բնության քմահաճույքի առջև, այլև քայլ առ քայլ ապահովագրում է իրեն ու իր տնտնեսությունը տարերքի հետևանքներից ու վստահորեն փորձում կանխել աղետներն իսկ: Գարնանային հեղեղումներից բնակավայրերի ջրածածկման դեպքերը կանխարգելելու նպատակով մարզում 2010-2011 թվականներին իրականացվել են գետերի հուների մաքրման և ամրացման աշխատանքներ. մաքրվել են Դեբեդ և Աղստև գետերի հուներն ու ամրացվել դրանց ափերը Արճիս, Դեբեդավան, Դիլիջան և Աչաջուր համայնքներում: Խաչարձան համայնքում հիմնանորոգվել են հեղեղներից վնասված ափապաշտպան հենապատն ու հետիոտն կամուրջը: 2010-2011 թվականներին Տավուշի մարզի մի շարք համայնքներում ձևավորվել են համայնքային թիմեր, կազմակերպվել է դրանց ուսուցումը, կազմվել են աղետների արձագանքման տեղական պլաններ, տրամադրվել է փրկարարական գույք:

1994 թվականին հակառակորդին խաղաղություն պարտադրելուց հետո տավուշցին հանգիստ շունչ քաշեց: Սակայն ժամանակ առ ժամանակ դեռ հարկադրված, սակայն դեռ ինչպես հարկն է չխաղաղված հակառակորդը հիշեցնում է զգաստության ու զգոնության անհրաժեշտության մասին:

Տավուշցու համար այսօր էլ անվտանգությունը թիվ մեկ խնդիրն է: Տավուշի մարզում համայնքների և բնակավայրերի ավելի քան քառասուն տոկոսը սահմանային են, հինգը գտնվում են ադրբեջանական դիրքերի դիմաց՝ ուղղակի կրակի տակ: Նոյեմբերյան քաղաքը գտնվում է Երևանից 185 կիլոմետր և ադրբեջանական սահմանից՝ ընդամենը 5 կիլոմետր հեռավորության վրա:

Տավուշցին ապրում է անավարտ պատերազմի ու անսկիզբ խաղաղության արանքում: Հայաստանի Հանրապետության սահմանի պաշտպանական մարտերի արձագանքները դեռևս հնչում են մարտերից մնացած արկի պայթյունով: 2011 թվականին Տավուշի մարզի Այգեհովիտ համայնքի նախկին դպրոցի բակում Հայաստանի Հանրապետության

Զինված Ուժերի սակրավորները հայտնաբերել և վնասազերծել են ականանետի չպայթած արկ:

Հետպատերազմյան տարիներին Տավուշի մարզի սահմանամերձ շեների ուղղությամբ ադրբեջանական կողմը պարբերաբար սադրանքներ է կազմակերպել՝ փորձության ենթարկելով հայ սահմանապահի ու տավուշցու զգոնությունը: 2011 թվականին Չինարի համայնքում հակառակորդի դիպուկահար կրակից հրազենային վնասվածքներ են ստացել Հայաստանի Հանրապետության Զինված Ուժերի զինծառայողներ: Տավուշի մարզի Կոթի համայնքի տարածքում Հայաստանի Հանրապետության Զինված Ուժերի զինծառայողները բացահայտել և ոչնչացրել են Ադրբեջանի տարածքից ներթափանցած, քաղաքացիական հագուստով հինգ հոգանոց դիվերսիոն խումբ: Սադրանքների ցանկը երկար է: Անասնագողությունն այդ ցանկում նույնպես վերջին թշնամական գործողությունը չէ: Սակայն յուրաքանչյուր սադրանքի մշատապես հաջորդել է համարժեք ու բազմապատիկ պատասխանը, որը զսպել է հակառակորդի վայրագությունը երկար ժամանակով:

Հայ-ադրբեջանական սահմանագծում տեղակայված հենակետերում մարտական հերթապահություն են իրականացնում պայմանագրային զինծառայողները: Ամրաշինական կառույցներն ու սահմանապահների կենցաղային պայմանները վերջին տարիներին էականորեն բարելավվել են. վերանորոգվել են հենակետեր տանող ճանապարհները, կառուցվել են վտանգավոր հատվածները շրջանցող նոր ուղիներ, բարեկարգվել և ավելի անվտանգ են դարձել դիտակետերն ու խրամուղիները: Արդյունքում, պետական սահմանի պաշտպանությունն իրականացվում է առավել անվտանգ և արդյունավետ կերպով:

Վերջին տարիներին Հայաստանի Հանրապետության կառավարությունը 125 միլիոն դրամ ծավալով ֆինանսական օգնություն է տրամադրել Տավուշի մարզի սահմանամերձ բնակավայրերում 1992-1994 թվականներին ռմբակոծությունների հետևանքով վնասված 110 բնակելի տների բնակիչների բնակարանային պայմանները բարելավելու նպատակով: 2009-2011 թվականներին Տավուշի մարզի սահմանամերձ մի շարք գյուղերում կառուցվել են առանձնատներ: 2011 թվականից Տավուշի մարզում Ղարաբաղյան հակամարտության հետևանքով անհայտ կորածների ընտանիքներին տրամադրվում է աջակցություն: Ոչ բարվոք տներում բնակվող ընտանիքները դրանք վերանորոգելու և բարեկարգելու նպատակով երկարաժամկետ, զրոյական տոկոսադրույքի վարկավորման հնարավորություն են ստացել: Լուծվել են 4 զոհված և 17 հաշմված զինծառայողների ընտանիքների բնակարանային խնդիրները:

Տավուշցի շինականը կանգնած է հայ զինվորի կողքին՝ անհրաժեշտության դեպքում պատրաստ ոչ միայն աշխատանքով ու օժանդակությամբ, այլև զենքով պաշտպանելու հայրենիքի սահմանները: Որովհետև զինվորը իր զավակն է ու իր ծնողը: Որովհետև պաշտպանական դիրքում կանգնած զինվորը առավոտյան դասի գնացող մանկան ապրելու ու ուսում ստանալու երաշխավորն է: Ամեն օր ու ամեն ժամ: Եվ հաճախ սահմանամերձ գյուղում կարելի է ականատես լինել մի արարի. առավոտյան տանից ձեռք-ձեռքի տված դուրս են գալիս երկուսը. ուսապարկն ու զենքը ձեռքին հայրը՝ սահմանային դիրքում հերթափոխի կանգնելու, և գրքերով լի դպրոցական պայուսակն ուսին դուստրը՝ դպրոց՝ նոր գիտելիքի հետևից: Դուրս են գալիս վստահ համոզմամբ, որ երեկոյան հանդիպելու են ընթրիքի սեղանի շուրջ: Ու գնում են հավատով, որ հաջորդ օրն ավելի լավը պիտի լինի:

Սույն գրքույկը ներկայացնում է 2007-2011 թվականներին ՀՀ Տավուշի մարզում առավել նկատելի ձեռքբերումները տնտեսության և ենթակառուցվածքների, կրթության, առողջապահության և մշակույթի, բնակարանային ապահովության և հասարակական անվտանգության բնագավառներում, որոնց արդյունքում բարելավվել է քաղաքացիների կենսամակարդակը: Գրքույկը ներկայացնում է նշված ժամանակահատվածում Հայաստանի սոցիալ-տնտեսական զարգացման համար խիստ բացասական հետևանքներ թողած համաշխարհային ֆինանսա-տնտեսական ճգնաժամի հաղթահարման ընթացքն ու արդյունքները: Ներկայացված են նաև Հայաստանի Հանրապետության կառավարության ջանքերն ու դրանց արդյունքները՝ ուղղված հանրային և մասնավոր հատվածների, հասարակական և բարեսիրական կառույցների, ինչպես նաև զարգացման միջազգային գործընկերների՝ ճգնաժամի պայմաններում սուղ միջոցների և մասնատված ուժերի համախմբանն ու արդյունավետ օգտագործմանը՝ ի շահ Տավուշի մարզի տնտեսության և բնակիչների: Գրքույկի գլխավոր հերոսը տավուշցին է, ում ստեղծագործ ուժն ու եռանդը, լավատեսությունը, դրական փոփոխությունների հանդեպ հավատն ու դրանց հասնելու վստահությունը հնարավոր են դարձրել այն բոլոր ձեռքբերումները, որոնք ներկայացված են գրքույկում:

Երևան - 2012